

Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻՒ Է. — ՇՐՋԱՆ ԺԹ. 1886 ՏԱՐԻ ԺԹ. ՅՈՒԼԻՒՍ 31

ԿՐՕՆԱԿԱՆ

ԴԺՈՒԱՐ ՕՐԵՐՈՒՄԸ ՍՐՏԻ ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ ՈՒ ՀԱՆԳՍՏՈՒԹԻՒՆ։

Եսայի Լ. 17։

Աստուծոյ փառաց ու պատուոյ համար մեր ունեցած հաւատը փորձանաց կրակի մէջ պէտք է ցոյց տա՞նք։ Եթէ որ կեանք ու նեղնալու բաղդաւորութիւնից էլ զրկուելու լինենք, մահը զարձնալ դեռ մեզ համար շահ կը մնայ։ Աստուածային կամաց նահատակն Ցիսուս Քրիստոս խաչի մահուն հոգիքն ազատեց անէծքից, ու կարճատև նեղութիւններից յետոյ, մեզ դէպի իւր երկնաւոր Հօր երջանկութիւնն է տանում։

Հին եբրայական պատմութիւնն, որ Դանիէլ մարգարէին իր գլխին եկած փորձանքի մէջ փառաւորուեց, ասում է. Դարէհ (Կիւաքսար) Մարաց թագաւորն ականայ հրամայեց՝ իր թշնամիներից իբրև աւրհնական հրամանին անհնազանդ տեսնուած Դանիէլին՝ առիւծների գուբը քցել, ու ասաց նորան. «Աստուածն, որին դու միշտ պաշտում ես, նա օգնի քեզ ու փրկի»։ Ու բերին մի քար,

*պրին գըի դրան առաջը. Թագաւորը կնքեց իւր մատանիքով և իւր մեծամեծներուն մատանիքով, որ մի գուցէ որ և իցէ մարդու մտքից անցկենայ Դանիէլի հետ մի խաղ խաղալ։ Բայց առաւօտը շուտով, երբ որ լոյսը բացուելու վերայ էր, Թագաւորն վերկացաւ տեղից ու շտապելով գնաց դէպի գուբն, ուր որ առիւծներն էին, և գոչեց ողձակի ձայնով. «Դանիէլ, կենդանի Աստուծոյ ծառայ, կարողացաւ քո Աստուածդ, որին դու յաճախ պաշտում ես, առիւծներից քեզ ազատել»։ Իսկ Դանիէլ պատասխանեց Թագաւորին. «իմ Աստուածը» ղրկեց իւր հրեշտակն, որ առիւծների բերանը գոնեց»։ Այն ժամանակ Թագաւորը շատ ուրախացաւ ու հրամայեց, որ Դանիէլին առիւծների փոսից հանեն ու տեսան, որ ոչ մի կերպով վնասուած չէ, որովհետև իւր Աստուծոյն էր ապաւինել։ — Ցիրաւի մի գեղեցիկ ու սրտաշարժ պատմութիւն է այս, որոյ մէջը խորին, ներքին ճշմարտութիւն կայ։ Դանիէլի վտակութիւն առիւծների գուբի մէջ՝ յետոյ հալածուած քրիստոնէից համար շատ անգամ սիրտ տուող մխիթարութիւն էր իրանց քաշած նեղութիւնների մէջ. ու մենք էլ հաստատւում ենք այն մտքի մէջ թէ՝ Աստուած չի թողնիլ իւր սիրելիներին. կամ՝ ինչպէս որ այս միտքը մի ուրիշ հին կտակարանի առաքեալ, աստուածային մարգարէն նոյն ուժով. ահա խոպոպո-ՐԼ-ն դաբ-յա- իմ դառ-նո-ՐԼ-նո. էլկեցէք իմ անձս, որ չըկորչի, ինչ- որ իմ ընտր ելէ+էբ+ +ո եթե+ +նեցէբ։

Ա՛խ, ինչպէս շատ անգամ քաշիլ եմ ես կեանքի դառնութիւնները լի չափով։ Շատ օրեր է պատահել, որ ես իմ կեանքս պահպանելուն մասին ինչպէս հագս եմ. ասել. իմ փոքրիկ բաղդաւորութեանս հանգամանքներիս համար արած հոգսերս՝ ինձ ամենևին հանգստութիւն չեն տուել. մի ժժուար դրութիւնից դուրս գալով, միւս աւելի մեծ դժուարութեան եմ հանդիպել։ Միտքս այնպէս շփոթուել է, որ չեմ կարողացել խելքս գլուխս հաւաքել ու իմ այդ դժուար դրութիւնս թեթևացնել. ոչ որի էլ չեմ կարողացել յայտնել՝ թէ ինչ վիճակի մէջ եմ, ախ, նորա համար, որ ունեցած պատիւս ու հաւատարմութիւնս մարդոց մէջ չկորցնեմ։ Ա՛խ, իմ կենացս ինչ դժուար րոպէներն էին, երբ որ ամբոխը մի կողմից, խայտառակութիւնը՝ միւս կողմից՝ քիչ էր մնում, որ ինձ բոլորովին ոչնչացնեն. երբ որ արդէն պատրաստ տեսնում էի, որ իմ թշնամիներիս ինձ վերայ յաղթանակելն պէտք*

յաջողել։ երբ որ ոչ մի ապաստանել ճանապարհ չէի կարողանում գտնել ինձ համար իմ անել գրաքիւնիցս։ Աչքս էի կարծում, որ իմ կեանքիս մէջ էլ երբէք ուրախութիւն տեսնելու չեմ, գերեզման մտնելուց յետոյ ուրիշ փրկութիւն չկայ։ — Բայց և այնպէս Դու, Աստուած, ինձ բոլորովին դեռ չէիր թողել, որովհետև ինձ հետ էիր։ Դու կրկին շուռ տուիր հանգամանքներն իմ օգտին և նորանով՝ որ մարդոց սրտերն փոխուեցան։ Ես փրկուեցայ, երբ որ դեռ չէի կարծում և ուրախութիւնը ժրպտաց ինձ, երբ որ ես կարծում էի, որ յաւիտեան մնաս բարով պէտք է տամ նորան։ Ով որ քեզ է ապաւինում, երբէք նորան անտես չես անիլ ու անտէր չի մնալ նա։

Ահա մխիթարութեան տեղ դառնութիւն եկաւ ինձ բայց յետոյ իսկապէս ուրախութիւն դարձաւ իմ դառնութիւնս։ Ա՛խ, ինչ քաշելի ես, երբ որ նորան, որին որ աշխարհիս երեսումն այնպէս սրտանց սիրում էի, անյոյս մահուան ղոհ գնացած տեսայ։ Մենակ մնացի։ Սրտովս սիրած հոգու հետ, որ ինձ համար այս աշխարհիս կորաւ, կորաւ ինձ համար իմ քաղքաւորութեանս ամենագեղեցիկ մասն էլ։ Ինձ այնպէս էր թվում, որ իմ սրտիցս մի արիւնաթակ կտոր ուզ։ Ի՛նչպէս ստոտիկ, ինչպէս սրտանց ցաւում, սրտաոտում էի ջեզ, ախ քաշելով ու սրտաոսք թափելով։ — Ա՛խ, ոչ թէ իմ կամքս կատարուեց, այլ Քոնն, ամենակարող Տէր։ Երբ որ մահուան իմ սև օրը պատահեց ինձ, և ես այնուհետև իմ գոյութեան ընկերութիւնիցը բաժանուեցի — , երբ որ սիրելի դիակը՝ դեղնած ու սառած՝ աչքիս առջևը պառկած էր. այն թանկագին աչքերն, որ երբեմն այնպիսի քաղցր ժպիտով ինձ վերայ նայում էին, յաւիտեան փակուեցան. այն շրթունքներն, որ երբեմն այնպէս սիրով իմ անունս էին տալիս, յաւիտեան համրացան — , ներիր ինձ, ով իմ Աստուած, որ ես մի ժամանակ տրտնջում էի. որ մի կարճ ժամանակ կասկածում էի, թէ Դու ինձ սիրում ես։ Սիրտս ցաւերով լցուած ժամանակը, հաղիւ թէ կարող էի ուրիշ կերով լինել։ Երկինքն ու երկիրս արգէն ինձ անտես էին արել. իմ ամենաջերմեռանդ աղօթքներս բարձրանում էին դէպի Քո աթոռդ, ինչպէս կարծում էի, առանց լսելի լինելու ջեզ։ — Երկնաւոր Հայր, դեռ այժմ էլ նորոգվում են իմ սրտիս ցաւերն, ունեցած կորուստիս համար։ Մխիթէ կարծդ եմ երբէք մոռանալ։ Մխիթէ կարող է երբ և իցէ իմ սրտիս

սէրը հանգչել, և իմ սրտիցս չնչուել ցանկութիւնը կրկին գըտնելու այն սքանչառացած հոգին, որ Դու ինձանից առիր: Բայց և այնպէս երկրպագում եմ Քո խնամատարութեանդ՝ և էլ չեմ տրրտնջում: Փրկեցէք իմ անձս ու վերջս, որովհետև միսիթարութեան համար սիրտս շատ նեղվում էր: — Ա՛խ, աւելի, աւելի սիրտս նեղվում էր իմ կեանքիս այն օրերումն, երբ որ ես, ով Դու իմ Աստուած, Դու խղճմտանքների Դատաւոր, իմ մեղաւոր լինելս ամատիկ զգալով, Քո շնորհացող ու ողորմութեանդ վերայ յուսահատվում էի, կասկածելով: Աւելի, աւելի նեղվում էր սիրտս այն օրերումն, երբ որ իմ արած գործերիս մէջ ունեցած մեղաւորութիւնս ինձ տանջում էր, ծանրանալով սրտիս վերայ մի ծանր քարի նման. երբ որ ես իմ յանցանքների հետևանքը պէտք է քաշէի, և ինքս ինձ վերայ սաստիկ նեղանում էի: Ի՞նչպէս կարող էի ես, ով աշխարհի Դատաւոր, յուսալ, որ Դու իմ աններելի յանցանքներս կը ներես, որ ես ինքս ինձ ներել չէի կարող: Ի՞նչպէս կարող էի ես յոյս ունենալ, որ Դու իմ աղօթքը կը լսես, որովհետև ես իմ վատ հակումներիցս յետ չկանգնելով Քո երկայնամտութեանդ դէմ էի գնում: — Շատ անգամ ամատիկ անվսեմութեան մէջ էի ընկնում: Իմ օրերս անց էին կենում՝ առանց ուրախութեան, իմ գիշերներն՝ առանց հանգստութեան: Ինքս ինձ տեսնում էի շրջապատուած իմ վատ կրքերիցս, որ թէև անիծում էի, բայց միշտ նոր մեղքերի մէջ ընկնելով, վազում էի դէպի իմ կորուստս, թէև սխ էի քաշում թողութիւն ստանալու համար: Ես արժանի չէի ամենայն ողորմութեանդ ու հատատարմութեանդ, որ Դու ինձ ցոյց էիր տուել, բայց և այնպէս Քո երկայնամտութիւնդ կար ու կար իմ վերայ անհատ և անպակաս կերպով: Դու ինձ նոր ժամանակ էլ տուիր, որ ուղղուեմ, ու ես լսեցի դարձեալ իմ Փրկչիս, իմ ամենահաւատարիմ բարեկամիս ձայնը:

Բայց Դո՞ւ իմ անձս փրկեցէր, ու վ՞ երջ: Ա՛յո, Դու մարդասէր Հայր, Դու միայն կարող էիր այդ անել: Ի՞նչ կարող էր անել բժշկի բոլոր օգնութիւնն ու իւր դեղերի զօրութիւնն, երբ որ ես, պատկած, ցաւերից տանջվում էի ու ոսկրներս փշրվում էին. Դու միայն կարողացար ինձ վերայ գութ ունենալ, ինձ մեղքանալ ու ինայել իմ կեանքիս. ինչու որ մի մահկանացու մարդը կարող էր մուրթ ապագայի վերայ հրամայել, որ դարձեալ պայծառ օրեր տայ ինձ: Դու միայն կամեցար ինձ վերայ խղճալ՝ ու ինձ

ոչորմել, որովհետև մարդիկն, երբ որ ես հիւանդութիւնիցս ոտնջուած՝ այնտեղ էի հասել, որ իմ դրութիւնս շատ ծանր էր, գլխէիչ աւելի իրանց վերայ մոտածեցին անձնասիրութիւնով, ու ինձ թողին ու հեռացան։ Աւելի սիրով գնացին նոքա ուրախ մարդոց մօտ, ու իմ արտասուքներս տեսնել չուզեցին։ Միայն Աստուած գիտէիր իսկ ժամն ու ժամանակը, միայն Դուն գիտէիր ամենից աւելի ներգործող դեղն ու դամանն, որ ինձ վրկես չարէն։ Ինչ որ մարդկային ճարտարամտութիւնը հնարել չէր կարող, Դուն պարգևեցիր ինձ առատապէս, երբ որ սաստիկ նեղ տեղն էի ընկած և ինձ վրկեցիր։

Դո՞ւ մանչո փրկեցի՛ր, ոչ Լիպրվե՞ս։ Այո՛, ինչպէս գիտցել ես Դուն ինձ վերայ քանի քանի անգամ, երբ որ ես Քո գիտութեանդ կարօտ էի։ Երբ որ ես երբեմն այնքան նեղ գրութեան մէջ էի տեսնում ինձ, որ անկարելի էի համարում, որ երբ և իցէ դարձեալ ուրախ սրտով շունչ քաշել կարողանամ, Դուն, իմ հրաշագործ օգնական ու պաշտպան, Դուն ինձ իմ նեղութիւններիցս ազատելով, անկարելին կարելի արիր։ Ձարի վերջին ատուերն անգամ, որ ինձ վերայ երկիւղ էր բերում, վերջապէս պէտք էր փարատուէր, անհետանար։ Այսպէս է օգնութիւն հասնում մի բարեգութ հոյր զաւակներին։ Նա միայն մտածմբ օգնելով, մի քիչ ժամանակ հանգստացնելով չէ բաւականանում. նա ուզում է չարը բոլորովին և ընդ միշտ հեռացնել։ Սորա համար նա, իւր հասցնելու օգնութեան ժամանակ, դժուար վիճակի մէջ գանուողի հետ վեր և վերոյ կերպով չէ վարվում, այլ խորը մտնում ու ցաւի պատճառը պատռում, գտնում. նա բանի տեղ չէ դնում, որ հիւանդ երեխան մի կարճ ժամանակ աւելի պէտք է տանջուի իւր վերոյ տարած խնամքից. նա միայն մտածում է, որ իւր զաւակին պատահած չարիքի արմատին հասնի։ Նա կատարեալ կերպով է օգնում, որովհետև իւր զաւակի վերայ խնամք է տանում՝ ոչ թէ իբրև մի անկարեւոյ, անզգայ օտար մարդ, այլ իբրև հայր՝ ամենայն սրտացաւութեամբ ու հաւատարմութեամբ։

Դո՞ւ չըլնաիր, ոչ ես կոչեցի։ Դուն իմ լաւութեանս համար ինձ խնամք տարիր՝ ոչ թէ ընդհանուր կերպով, ինչպէս որ այս աշխարհիս մի երկրաւոր թագաւոր ու իշխան խնամք է տանում իւր ձեռքի տակն եղած ազգի լաւութեան համար, ուր որ հաղարաւոր մարդիկ թշուառութեան մէջ կարող են կոտորուել, որովհե-

տէր նա ամենին լաւ չէ ճանաչում ու գոհ է մնում, եթէ որ ազգի մեծամասնութիւնն ապահով դրութեան մէջ լինի միայն։ Ո՛չ, Դու այնպէս չարիր, միլիոնաւոր աշխարհների իշխող, խնամով արարածների, որոց թիւն ու տեսակն ոչ մի մահկանացու մտքին անգամ անցկացնել չէ կարող։ Դու ինձ վերայ այնպէս խնամք տարար, երբ թէ ես մի միայն լինէի քո սիրոյդ ընտրած առարկան, երբ թէ աշխարհքիս վերայ գալիքների ահագին ընթացքն այնպէս տարած լինէիր, որ միայն ինձ օգնութիւն հասցրած լինիս։

Շատ անգամ կասկածաւորութեամբս խոցոտել եմ ու մտածել թէ՝ աստուածային նախախնամութիւնն, այո՛ թէև բոլոր սիեզերքոյ վերայ հսկումէ, բայց թէ մասնաւոր արարածներ յառաջ են գալիս ու անհետանում, ծնում՝ կամ մեռնում, բարօրութեան՝ կամ թշուառութեան հանդիպում՝ ի՞նչ հոգս ունենայ նոցա մասին։ Կայծակը խփումէ՝ ինչպէս թագաւորի պալատին, այնպէս էլ գիւղացու խրճիթին. մահն՝ այսօր հարուստի վերայ է գալի, վաղն՝ աղքատի. այստեղ զրկումէ աշխարհին այնպիսի մարդկանցից, որոնց կեանքի համար ամենաղնիւ օրտերը զուր են հառաչում, այնտեղ խնայումէ չարագործի օրերին, որի ապրելուն ոչ ոք կարօտ չէր։ Որդը, մարդուս չը տեսնելովը, ոտի տակը ճըխըրվումէ, մարդս էլ իւր գլխին եկած զգայութիւն չունեցող վորձանքների ոտի տակն ընկնում, ոչնչանում, գնումէ։ — Ա՛յսպէս էի մտածում ես շատ անգամ իմ բոլորովին յուսահատած թուլասրտութեանս մէջ։ Բայց հէնց այդ ժամանակ իմացայ ես հրաշալի կերպով թէ՝ որոնց որ Դու սիրումես, նորանց համար ամենայն բան՝ մինչև անգամ ամենադառն անբաղդութիւններն՝ իբարին են. թէ Դու, մեր երկնաւոր Հայր ու Տէր, մեզ վերայ մտածում ես, երբ որ մենք մեզ ամենայն իրամքներից զուրկ մընայած ենք համարում. թէ Դու միշտ հաւատարիմ ես, ու մեր ուժից վեր վորձանքի մէջ ընկնել մեզ չես թողում, այլ այնպէս ես անում, որ վորձանքն այնպիսի մի վերջ ունենայ, որ մենք դիմանալ, տանել կարողանանք։ Ա՛յո՛, ես ճշմարտապէս հասկացել եմ, որ մեր գլխի ամեն մազերը համարուած են, որ ոչ մի ճընճղուկ՝ առանց Քո կամքիդ՝ կորից յած չէ ընկնում։

Դո՜ւ իմ ամեն ծեպէեր ֆո եպոպ կըէցե։ — Ո՛վ ողորմած Տէր, իմ յանցանքներս դեռ ևս չեն ձանձրացրել իմ անհատ աստուածութիւնս Քո հաւատարմութիւնդ դեռ չէ թուլացրել։ Ա՛խ, ով եմ ես,

որ Դու ինձ միտդ ես բերում։ Քանի քանի անգամ ուխտեցի, որ վոխուեմ, լաւանամ ու չըկատարեցի ուխտս։ Քանի քանի անգամ, իմ սաստիկ զղջմանս ժամերից յետոյ, ուելի տատանուել եմ փոքրոգութեամբս, քան թէ առաջ։ Եւ էլի յոյս ունես Դու իմ գարձից դեպի քեզ, ու չես թողում ինձ խորը գնամ։ Դու գրկեցիր աշխարհ Յիսուս Քրիստոսին, որ նա պատի, գանի կրածներին և ամենին կեանք ու երջանկութիւն պարգեւի։ Այդ Քո բարերար անօրէնութիւնդ ինձ համար էլ էր, որովհետև Նա Քո անունովդ բարձր ձայնով կանչում էր թէ՝ «եկէք ինձ մօտ բոլորդ, որոնք դադրել էք ու ծանրաբեռնուած էք, ես ձեզ կըհանգըստացնեմ», որովհետև իմ լուծս քաղցր է՝ ու բեռս թեթեւ»։ Նա՝ իւր միահաւանքը Դաղգոթայի վերայ՝ կնքեց, որ մենք յաւիտենական ողորմութեան ակնկալել կարող ենք։ Նորա անունովն՝ ինձ էլ իմ մեղքերս ներուած են։ Այս անունն եմ կրում ես։ այս անունով պէտք է արժանի լինիմ մեռնելու, որ մանակից լինիմ Նորա արքայութեանն ու իմ մեղայ Թադուհեան։

Հայր, ըստը իմ Ղեղէբս Դու Քո էսեպ է +ց՞ս։ — Երանի Նորան, որոյ յանցանքները ներուած են ու մեղքերը ծածկուած։ Երանի՛ այն մարդուն, որոյ անօրէնութիւնները Տէրը չէ համարում, և որոյ սրտում ծուութիւն չըկայ։ Ուրեմն ոչ ոք էլ չի պիտի յուսահատուի։ Զղջացած ու կոտրուած սրտով իմ անարժանութեանս վերայ՝ հոգուով մօտենում եմ Քո սուրբ աթոռիդ, և, աչքերս երկինք քցած, աղաչում եմ. երկնաւոր Հայր, ների՛ր իմ մեղքս ու մի պահի իմ անօրէնութիւնս։ Դու, որ ողորմած ես Քո բոլոր արարածներիդ, այսօր ինձ էլ Քո ողորմութիւնից մի զրկի։ Այսուհետև Քո աչքիդ առաջը պէտք է անց կացնեմ իմ կեանքս և ապրեմ խոնարհ սրտով, անյիշաչար լինելով ու հաշտ բոլոր իմ թշնամիներիս հետ, նոցա օգնելու համար միշտ պատրաստ, անարատ կեանքով, ամենայն բարի բանի համար անդադար՝ իմ փրկչի Յիսուսի հոգուն։ Եթէ որ այն միխիթարութիւնն ունենամ, որ Դու իմ յանցանքներս՝ ներել կարող ես, ամենայն ուրախութեամբ, նորից սիրա առած, իբրև անցաւոր վիր կապեմ պանդխտութեանս ցուպն իմ այս աշխարհիս վերայ այսուհետև ունենալու կեանքիս մէջ, ու ոչ մի քաշելիք ինձ չի վախեցնիլ, ինչի որ Դու, իմ Աստուածս, ինձ հետ ես. ուրեմն ո՞վ կարող է ինձ հակառակ լինել։ Հազար վտանգներ կարող են ինձ

ոտառնալ աւեն կոչմից, ինչպէս որ հին ժամանակին՝ այն իմաստունի առաւծներն իւր բանակի մէջ. բայց և այնպէս ես գիտեմ, որ Դու կարող ես աներևոյթ կերպով զրկել Քո հրեշտակդ, որ նոցա բերանը բանայ: Մինչև անգամ, երբ որ մնհատան ոտաը ձեռքը մի օր, մի ժամանակ ինձ կը բռնի, այն ժամանակ էլ՝ ես չեմ դողալ: Անցաւոր լինելն է վիճակուած աւեն մի սրտաճմի, որ այս աշխարհիս երեսը կայ. ինչու՞ համար միայն ես բացառութիւն պէտք է լինեի: Բայց ես գիտեմ, որ իմ մէջս անանցանելի մի բան էլ կայ, որ է իմ հոգիս, լուսոյ յաւիտենական ալբիւրից բղխած կայծը: Ես իմ կեանքս կը շարունակեմ ու կապրեմ, եթէ որ մինչև անգամ այս երկրագունդս յոչնչութիւն լուծուի, ու այն ժամանակ իմ երկնաւոր Հօրս տանն՝ աւելի կատարեալ օթևանի մէջ՝ անհամեմատ կերպով աւելի պարզ կը հասկանամ այն խօսքը թէ՝ Դու ՝ն ասյս փրկեցիր, ու Լիարչե՞ս:

(Թարգմ.) Գ. Ե. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀՐԵԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՕՐԵՐՈՒՄ· *)

Հրէական պանդխտութենէն առաջ։

Իսրայէլական կրօնի անխափան պահպանութեան արտաքին կարևոր միջոցներից մեկն էր նորա աստուածպաշտութիւնը, որ կենդրոնացած և սահմանափակուած էր միայն Երուսաղէմի մէջ։ Թէև Հին Կտակարանի ծէսերն ու արարողութիւնները սահմանափակ և բացառիկ են երևում, սակայն առանց այդպիսի նախասահմանեալ զգուշութեան դժուար էր միաստուածութեան գաղափարն անխափան պահպանել Երրայեցւոց մէջ։ Ուխքի առաջ ունենալով հին աշխարհի դրութիւնը և Իսրայէլի ձգտումները՝ իր պատմութեան նախկին ժամանակաշրջաններում, Հին Կտակարանի կրօնը օտար տարրերի հետ խառնակուելուց ազատ պահելու համար կարևոր էր, որ նա անջատ մնար, որովհետև այդ տարրերը կարող էին նորա համար վտանգաւոր լինել։ Այս դէպքում աւանդութիւնն էլ ունէր իր նշանակութիւնն ու օգուտը։

Ուր էլ որ չուէր Հռովմայեցին, յոյնը կամ Ասիայ բնակիչը, նա այնտեղ կարող էր տանել իր հետ իր չաստուածները, ամեն ուրեք կարող էր գտնել այնպիսի ծէսեր, որ նմանութիւն ունենային իր սեպհական ծէսերին. բայց հրէինն այդպէս չէր։ Նա ունէր միայն մի տաճար, որ գտնվում էր Երուսաղէմի մէջ,—միայն մի Աստուած, որ բազմակ կայ աթոռի վերայ՝ քերով-

---

(*) Ներկայ յօդուածը, որ մենք քաղուածօրէն դուրս ենք բերել 1885 ամի Христіане Чтеніе „ 5—6· 7—8· 9—10 որդ համարներից, պատկանում է աստուածաբանութեան եւ փիլիսոփայութեան դոկտոր Ա. Էդերշէյմի գրչին, որ ծննդեամբ հրէայ է, իսկ քրիստոնէութիւնը իր չափահաս ժամանակում ընդունած։ Բնագիրն անգլիարէն է։ Իսկ մենք քաղուածն արել ենք ռուսերէնից, որ այս խորագիրն է կրում։— “Приготовленіе къ Евангелію: Іудейскій міръ во дни І. Христа „: Մենք մեր քաղուածի խորագիրը դրինք՝ «Հրէական աշխարհը Յիսուս Քրիստոսի օրերում»։ Ա. Էդերշէյմը հրէական ծագումն ունենալով կարողացել է քաջ ծանօթանալ Երրայեցւոց ընդարձակ աւանդական (տրադիցիօնալական) գրականութեան հետ եւ համեմատել այն Ս. Գրոց հետ եւ այդպիսով պարզել նոր հնութեան անհասկանալի ու մութ երեւոյթները։ Ինչպէս յիշեցինք, այս յօդուածը ոչ թէ քառացի թարգմանութիւն է, այլ քաղուած, որովհետև շատ պարբերութիւններ ու կտորներ, մինչեւ անգամ ամբողջ գլուխներ բաց ենք թողել,—զոր օրինակ փիլոնը եւ Յոզեպոս (Բան)։ Հելլենական աստուածաբանութեան զարգացումը, ապօկրիֆները (թագուցած, խորհրդաւոր գրքեր· կամ այն գրքերը, որոնք հեղինակների անպատութեան պատճառով Ս. Գրքի մէջ չեն ընդունուած)։ Ադիաբէյ, Արիաբոզուզաս· գլխներ, (որոց մասին անցեալ տարի Արարատի մէջ գրեց ծ. Տ. Գաբրիէլեանցը—Լոպպելոյ եւլն· եւլն։

Մ· Ք· Գ·

քէներով շրջապատած և մինչև ցայժմ թագաւորումէ Սիոնի վերայ։ Այս տաճարն էր այն տեղին, ուր տիրասահման և անարատ քահանայութիւնը հաճելի զոհեր էր մատուցանում մարդկանց մեղքի թողութեան և Աստուծոյ հետ հաղորդութեան համար։ Այստեղ՝ ներքնագոյն տաճարի անթափանցելի աղջամղջի մէջ՝ դրած էր տապանակը, ժողովրդի առաջնորդը դէպի Աւետեաց երկիրը, և այն պատուանդանը, որի վերայ զկայ էր առել աստուածութիւնը։ Այդտեղ քահանայապետը տարին մի անգամ միայն կարող էր մտնել, որ հանդիսաւոր կերպով թողութիւն հայցէ ժողովրդի համար։ Այստեղ՝ ոսկեղէն սեղանի վերայից՝ կնդրկի բուրմունքն ու խնկոց ամպն էր բարձրանում—նշան Իսրայէլի աղօթքի ընդունելութեան։ Այստեղ եօթնջահեան աշտանակը սփռում էր, ծաւալում անշիջանելի լոյս—վկայ Աստուծոյ մեծ վայելչութեան և ներկայութեան, որի հետ աղգը իւր ուխտն էր կապել։ Այստեղ, իրր իւկ և իսկ առաջի Եհովայի, իւրաքանչիւր եօթնեկում դրվումէր սեղանի վերայ առաջաւորութեան հացը («հաց դիմաց»), մշտական նուիրեալ կերակուր, որ Իսրայէլն ընծայաբերումէր Աստուծոյ, և որով Աստուած սնուցանումէր իւր ընտրեալ քահանայութիւնը։ Այստեղ՝ զոհի արիւնով, սրսկած մեծ զոհից սեղանի վերայից բարձրանումէր հանապազօրեայ և տնական ողջակիզի զոհերի ծուխը, զորս մատուցանումէր Իսրայէլն ազգովին՝ ամեն մի իսրայէլացու համար, ուր էլ որ գըտնուէր սա. իսկ այդ ժամանակ տաճարի ընդարձակ սրահները լցուած էին ինումէ ոչ միայն Պաղեստինի տեղական բնակիչներով, այլ և «երկնից տակ գտնուող ազգերի մէջ տարածուած հրէաներով։» Այս տաճարի շուրջն էին խմբուած անցեալի յիշատակները, նա և նորա հետ էին կապուած ապագայի փայլուն յոյսն ու ակնկալութիւնը։ Իսրայէլացւոց պատմութիւնն ու բոլոր ակնկալութիւնները այնպէս սերտ հիւսուած էին կրօնի հետ, որ կարելի է ասել՝ արտաքոյ կրօնից նորա չունէին պատմութիւն, և ընդհակառակն։ Եւ այսպէս պատմութիւնն ու հայրենասիրութիւնը, կրօնն ու ակնկալութիւնը միահամուռ մատնացոյց էին լինում Երուսաղէմի ու տաճարի վերայ թէ դարձ են Իսրայէլի միութեան կենդրոնները։

Ազգի ճնշուած, ընկճուած դրութիւնը չը կարողացաւ երբէք փոխել նորա հայեցակէտը, չը կարողացաւ դրգռել նորա անսասանելի հաւատը—Ի՞նչ նշանակութիւն ունէր Եգովմացիի Հերովդէսի մինչև անգամ Դաւթի աթոռը գրաւելն իսկ, ո՞չ ամենքն էլ այն, որ գորանով նա ցոյց տուեց, թէ մեծ յանցանք է գործել Իսրայէլն անցել էր աւելի խոր ջրերից և յաղթանակով դուրս եկել ափը. գարերով շարունակ մատնուած էին Եգիպտոսում՝ սարկութեան և գերութեան և այն՝ ըստ երևութին՝ անյոյս, այլ սակայն գիտելով իրանց պատճառով պատուաւոր և իրանց նեղիչներին հեղձամահ առնող ծովի վերայ, երգեցին յօբելեանի առաւօտեան օրհներգութիւնը։ Նորից երկար տարիներ նոցա գերիչները կախ էին տալիս սիօնեան սազմոսարանները քաղաքների գետերի մօտ և սուիպում էին, որ նորա երգեն ու գովեն իրանց Սիօնն ու Երուսաղէմը. բայց այդ թագաւորութիւնն էլ

Հող ու մխիր դարձաւ, և Իսրայէլը նոր ի նորոյ արմատ ձգեց և բողբո՜ջ արձակեց։ Աստուց կողմից եղած խոշտանգանքն ու հալածանքը ամէն նեղութիւնից էլ վեր էին, որովհետև նորա սպառնում էին նորա հաւատը բառնալ, բառնալ նոյն իսկ ազգութիւնը։ Աստուց Թագաւոր Անտիոքոս Դ. Եպիփանը (Երևելին) իւր համարձակ տիմառութեամբ արգելք դրեց նոցա կրօնի վերայ, չանաց աչնչացնել նոցա սուրբ գրքերը, անողորմ՝ վայրագութեամբ ճնշում՝ խոշտանգում էր նոցա հեթանոսական ծէսեր կատարելու համար, պղծեց տաճարը, նուիրելով նորան Ողիմպեայ Զևսին (Դիոսին, Արամազդին) և մինչև անգամ կռապաշտական սեղան կանգնեց ողջակիզի սեղանի վերայ։ «Եւ պատուէր ետ քաղաքացն Հրէաստանի մատուցանել զոհս քաղաքի քաղաքի։ Եւ ժողովեցան առ նոսա այր ամենայն, որ ապստամբ լեալ էր յօրինաց անտի և լցին չարեօք զերկիրն, և արարին ամրախիտ զ՝սրայել յամենայն տեղիս ամրութեան ապաստանաց նոցա։ Ցամին Հարուբերորդի քառասներորդի հինգերորդի, ամենայն որ օր քսան և հինգ էր ամսոյն, շինեաց նա պատկեր պղծութեան անապատի ի վերայ սեղանոյն։ Ընդ ամենայն Հրէաստան շուրջ զքաղաքօք շինեցին մեհեանս և ի վերայ ամենայն դրանց ապարանիցն և ընդ ամենայն գնացս քաղաքացն՝ խունկս արկանէին։ Եւ զգիրս ամենայն կտակարանացն, զոր գտանէին, պատառէին և հուրբ կիզուին։ Եւ ուր առ ումեք գտանէին գիրք կտակարանաց, կամ թէ ոք ուրեք ընդ օրէնս հաւատարէր, հրամանն թագաւորին զնա մահու սպանանէր *)»։ Բայց ամենից վատն այն էր, որ նորա պիղծ խորհուրդներին առաջ տանելուն օգնութեան ուրացող քահանայապետներ, որ մեկը գերազանցում էր քան զմիւսը իւր ստացած կաշառներով։ «Յասոն անուն ոմն՝ եղբայր Ցոնիայ (III ի), չանացաւ շնութեամբ մնանել հանել զքահանայապետութիւնն Ցոնիայ, խոստացաւ տալ յարքունիս վաթսուն քանքար։ և այլ ևս հարիւր ևս մատուցից՝ ասէ, եթէ գործն յաջողեսցի։ զքաղաքն ի ձեզ նուաճեցից, թէատրոնս և կրկէս շինեցից, ասէր, և երեսաղէմացւոցն ի ձեր անուն Անտիոքացիս գրեցից։ Իբրև յանձն առ թագաւորն, եգիտ նա զիշխանութիւնն, զոր խնդրէր՝ հետ ընդ հետ վազվազակի ի Ցունաց ի հեթանոսութիւն անդր ըղնտանի օրէնսն դարձուցանէր։ Զպարգևսն զառաջինսն ղարքունի, որ ի ձեռն Ցովհաննու և Փառղոմեայ հօր ի ժամանակի հրեշտակութեանն՝ որ վասն հաստատակաց սիրով օգնականութեան կատարեցան և զկրօնսն օրինաւորս ի բաց քակեցին, և անօրէնութեան նոր օրէնս ի ներքս արկանէր։ Զի ի ներքս ընդ բերդսն իսկ թէատրոնս և երիտասարդանոցս շինէր, ժիրաժիր մանկունս ընտրանաւ զգին յունութիւն արուեստականացն տայրն։ Եւ այնպէս իմն եռանդն ածէին, սկիզբն արարեալ պյազգութեանն և հեթանոսութեանն վասն ամբարիշտ և չքահանայապետ Ցասոնեայ անհնարին մոլորութեանն։ Զի այնուհետև թողեալ էր զպաշտօն պատարագաց սեղանոյն և զսպասս տաճարին և արհա-

(*) Ա. Մակաբայեց. գլ. Ա. 54 -60։

մարհեալ էր զողջակէզս պատարագացն. յօժարագոյնս տային զանձինս իւրեանց ազգք քահանայիցն ի մարդիկս (ի մարդկս) և ի բռնամարտիկս և յանօրէնս բաշխոյս կաքաւեաց և արդնընկէց տէգընկէց ձայնատու ժամանակն (տէգ, մլրակս խազցնել). Եւ զհայրենի պատուն առ ոչինչ համարէին, քայց զանօրէն հեթանոսութեան փառս քան զօրհնութեան փառս լաւ համարէին: . . . . Ապա յետ երից ամաց ժամանակի արձակեաց Ցասոն զՄենեղաւոս զեղբայր մոլկան Սիմոնի, ի ձեռն եւ նմա տանել առ արքայ զգանձն զալքունի. նա՝ իբրև յանդիման եղև արքային և մեծարեցաւ ի նմանէ, յանձն իւր սկսաւ կորզել զքահանայութիւնն և զյանցանել զՑասոնեաւ՝ յաւել ևս ի սակ գանձին այլ ևս երեք հարիւր քանքար, և առնել գայր զհրամանն իշխանութեանն զարքունի. . . . *). Բայց սորան էլ չընայելով, Եփրայիմի հեռաւոր լեռներում Աստուած նորանց համար փառաւոր յաղթանակ էր պատրաստել. Այդպիսի փառաւոր յաղթանակներից յետոյ որ կատարվումէր անուս մարդկանց ձեռքով աստրական զօրքի զօրաւանակի հետ կռուելիս, Ցուդա Մակաբէն, որին արդարև վայել էր աստուածային մուրճ անունը տալ տաճարը մաքրելց և նորա սեղանները կանգնելց նոյն իսկ այն օրը, երբ թշնամիք լցին «չարութիւք զիրկիր»: Նոցա ամբողջ պատմութեան մէջ տեսնում ենք, որ ամենախաւար գիշերային ժամերը կարապետ էին հանդիսանում առաւօտեան արշալոյսին, որովհետև նոցա բոլոր մարգարէները միաձայն համոզումէին նոցա սպասել և յուսալ. Աննեւալի վերաբերութեամբ նոցա կանխասացութիւնները կատարուել էին, մինչև նոքա իրականութիւն չէր պէտք է ստանային Սիօնի և Խորեբէլի առաւել փառաւոր ապագայի վերաբերութեամբ, որ կատարուելու էր Մեսիայի գալստեամբ.

Միայն Պաղեստինի հրեաները չէին, որ այդպէս էին զգում, և որոնք այդ ժամանակ ազգի փոքրամասնութիւնն էին կազմում. ազգի մեծամասնութիւնը կազմում էին «նժդեհները», պանդուխտները. Այս բառը կորցրել է իւր նախկին նշանակութիւնը, — այն է՝ գերութիւն ըստ արդարադատութեան Աստուծոյ, որովհետև Պաղեստինից մեկնելն այժմ յօժարակամ բան էր դարձել. Ըստ Յովսեփոսի «չըկար ազգ աշխարհիս երեսին, որի մէջ տարածուած չըլինէր Ցուդայի ազգի մի մասը», և թէև «նա շատ էր տարածուել ու սփռուել աշխարհի վերայ», այնուամենայնիւ նա ո՛չ մի տեղ չէր գտնում իւր իսկական «Հայրենիքը». Մեր դարագլխից (վերա) դարու կէս առաջ՝ Եգիպտոսից, ուր հրեաներն առանձնաշնորհութիւններ էին ստացել այդ ժամանակ, երբայական պատգամախօսի հետևեալ լացն ու կոծն է լսվում. — «Հընկելով բոլոր ովկիանոսներն ու երկրները, դու քո ներկայութեամբ ու սովորութեամբ անպատուութիւն ես բերում քո շուրջը բնակուողների վերայ». Եօթանասուն տարի յետոյ յոյն աշխարհագիրը և պատմաբան Ստրաբոնը միևնոյնն է վկայում նոցա ամենայն տեղ սփռուած

(*) Մակաբ. գլ. Դ.

լինելու համար և խօսում այնպիսի լեզուով, որ ցոյց է տալիս, թէ ո՛րքան իրաւացի էր պատմահօրս դանդաղը։ Փիլոնը Հարեանցի կերպով ցոյց է տալի Իսրայէլի անխառնակ կեցուածքի պատճառը Հելլենոս աշխարհում, երբ խօսելով իւր հայրենակիցների վերայ, որ բնակվում էին «Եւրոպայի ամեն քաղաքներում նահանգներում ու կղզիներում», ասում է թէ՝ նոքա ուր էլ որ գնացին, ունէին մի մայր քաղաք միայն, և այն էլ ո՛չ թէ Աղէքսանդրիան, Անտիոքը կամ Հռոմն էր, այլ «սուրբ քաղաքը իւր տաճարով, որ նուիրած էր Բարձրելոյն Աստուծոյ»։ Նորա սիրտը բաբախում էր միայն Երուսաղէմում և այնտեղից էր հոսում կենսատու արիւն նորա ամենահեռաւոր անդամներին կեանք տալու համար։

Բոլոր վերևն ասածները կարելի է ընդունել աւելի արևմտեան, քան արևելեան նժդեհութեան վերաբերութեամբ։ Վերջինս Պաղեստինի հետ սերտ յարաբերութիւն ունէր։ Ցիշատակաց արժանի գաղափարական տօնի ժամանակ Երուսաղէմի մէջ կայացած ժողովի մասին եղած աւետարանական պատմութեան մէջ պանդուխտները (ըստ երևութին) երկու մեծ բաժիններին են վերաբած, — արևելեան կամ անդրեփրատեան և արևմտեան կամ հելլենական։ Առաջինին պատկանում էին «Պարթևք և Մարք, և Ելեմացիք և որ բնակեալ են ի Միջագետս»։ Հրէաները միջին տեղն էին բռնել, իսկ կրետացիք և արաբացիք» ներկայացնում էին հեռաւորագոյն բնակիչները։ Արևմտեանները Պաղեստինի մէջ յայտնի էին սովորական անուամբս «սիւրք ի մէջ հեթանոսաց», հելլեններ կամ յոյներ։ Անդրեփրատեան հրէաները, որ բնակվում էին Բաբելոնում և այլ շատ սատրապներում (հին Պարսկաստանի նահանգներում), հաշուում էին Պաղեստինի և Ասորիքի բնակիչների շարքում և կոչվում էին ընդհանուր անուամբս «Հրէայ», որովհետև մի ընդհանուր լեզուով էին խօսում։

«Հելլենականների (հեթանոս հռովմայեցիների մէջ սփռուածների) և հրէաների» մէջ մեծ զանազանութիւն կար, և այդ լեզուի տարբերութեան մէջ չէր կայանում միայն, այլ վերաբերում էր նոցա մտքի ուղղութեանը։ Ցունաց աշխարհում մնաւոր ազդեցութիւնը ցոյց էր տալիս ամեն բանի մէջ, որից չէին կարող խոյս տալ հրէաները։ Սակայն բնական է, որ հելլենականները, որ ընկած էին այդպիսի թշնամի տարրերի մէջ, պէտք է ցանկային իրանց արևելեան եղբայրների հետ հրեանալ։ Փարիսեցութիւնը, որ պարծենում էր իւր օրինականութեամբ, սրբութեամբ, աւանդութեանց դիտութեամբ և ծանօթութեամբ, իւր արհամարհանքը չէր ծածկում դէպի հելլենականները և բացարձակ կերպով ատոր էր դասում Ցոյներին բաբելոնական «պանդուխտներից»։ Այդ զգացմունքը խոր արմատ էր ձգել ժողովրդի հոգու մէջ, որի համար կարելի է առաջ բերել այն փաստը, որ առաքելական եկեղեցում նորա գոյութեան առաջին օրերում հելլենականների (Ցոյների) և երբայեցիների մէջ վէճեր էին բարձրանում։ (Գործք. Զ. 1.)։

Ցուդայի առաջնորդները Բաբելոնի նժդեհների մասին զոլորովին այլ

կարծիք ունէին, Բաբելաստանն ու Ասորիքը դէպի հիւսիս մինչև Անտիոք համարվումէին Իսրայելացւոց երկրի բաղադրիչ մասը։ Միայն Բաբելաստանն էր, որ Պաղէստինի մասն էր համարվում, իսկ «երկրի» վերաբերութեամբ (ինչպէս նորա անուանումէին Պաղեստինը) բոլոր կողմերը սահմանից դուրս էին համարվում։ Որովհետև այն ժամանակ կարծումէին, թէ Ասորիքն ու Միջագետքը Տիգրիսի ափերից դէպի արևելք մտնումէին Դաւթի նուաճած երկրների սահմանը, վասնորոյ դրքա հրէանների գաղափարով միշտ «իսրայէլական» երկիր էին համարվում։ Եւ իրօք Եփրատի ու Տիգրիսի հովիտներում այնքան բազմաթիւ և հարուստ հրէաների գաղթականութիւններ կային, որ վերջին ժամանակների մի մատենագիր այդ տեղերը Իսրայէլացիների երկիր է անուանում։ Արքայական ջրանցի վերայ շինուած էր մի քաղաք, որ հրէական ամենահին գաղթատեղի է համարվում։ Այդ ջրանցքն անցնումէր Եփրատից մինչև Տիգրիս։ Շատ էր գովուած նորա ժողովարանը, որը, որպէս թէ՝ շինել էր տուել Ծոնիա թագաւորը տաճարից բերել տուած քարերով։ Արևելեան հրէաներն այս ամրաշէն քաղաքի մէջ էին հաւաքում Տաճարի համար հանգանակուած ահագին գումարները և այդտեղից ուղարկվում էին այդ նուէրները նշանակեալ տեղը՝ շրջապատած մի քանի հազար զինուորներով։ Մի ուրիշ գանձարան—քաղաք էլ կար Նէհարդէա անունով, որ հիւսիսային Միջագետքումն էր։ Միայն այս փաստը բաւ է, որ ցոյց տայ, թէ որքան բազմաթիւ և նշանաւոր էր այս տեղի գաղթականութիւնը, որ կարող էր հեթանոսների ագահութիւնը գրգռող այդ ահագին գումարները ժողովել և ապահով կերպով Պաղեստին ուղարկել։

Խօսելով արևելեան պանդխտութեան մասին, չատ կարևոր է ի յուշ ածել այն հանգամանքը, որ Բաբելոնից նախ Զօրաբաբելի և ապա Եզրի ժամանակ (536 Ն. Ք.) վերադարձան հրէաների փոքրամասնութիւնը միայն, այն է 60,000 հոգի. սակայն աւելի հարուստ և ազդեցիկ հրէաները Բաբելոնում մնացին։ Ծովսէփոսին նայելով, որին համաձայն է և ականաւոր Փիլոնը, անդրիփրատեան նահանգների մէջ բնակուող հրէաների թիւը միլիոնների էր հասնում։ Եթէ ժողովրդական ապստամբութեանց ժամանակ եղած կոտորածներին նայենք, այն ժամանակ այս թիւը չափազանց մեծացրած չի երևիլ մեր աչքին։ (Միայն Սեվկիայում 50,000 հոգի ջարդուեցան)։ Համաձայն հին աւանդութեան, հրէական ազգաբնակութիւնը պարսկական տէրութեան մէջ իրր այնքան մեծ էր, որ Կիւրոսը երկիւղ էր կրում, թէ մի՛ գուցէ պանդուխտների հայրենիք դառնալու պատճառով իր երկիրն ամայանայ, վասնորոյ արգելեց նոցա վերադարձը։ Այդ մեծ ու հոծ հասարակութիւնը շուտով կարող էր քաղաքական ոյժ դառնալ։ Պարսկական թագաւորների ժամանակ հեզութեամբ, խոնարհութեամբ կառավարուող հրէաները՝ Պարսկաստանի անկումից յետոյ (330 Թ. Ն. Ք. Ք.) վայելումէին Աղէքսանդրի յաջորդների հովանաւորութիւնը։ Երբ Մակեդոնա-Ասորական իշխանութիւնը տեղի տուեց Պարթևների պետու-

թեանը (63 թ. ն. ք.), հրէաները դէպի Հռովմն ունեցած ազգային ընդդիմադրութեան պատճառով անհամեմատ բարձր նշանակութիւն ունեցան արևելքում։ Քրիստոսի ծննդից 40 տարի յետոյ նոքա այնքան մեծ ազդեցութիւն ու նշանակութիւն էին ստացել, որ հռովմէական լեգէոնները երկիւղ էին կրում նոցա թշնամութիւնը գրգռելուց։ Բայց չի կարելի անուշադիր լինել դէպի այն հանգամանքը, որ այս հովանաւորեալ նահանգներում անգամ նոքա բոլորովին ազատ չէին հալածանքից։ Պատմութեան ժամանակագրութիւնները շատ անգամ ծանուցանում են մեզ թէ այն ժարդիկ, որոնց մէջ բնակվում էին հրէաները, յաճախ արիւնալից շփոթներ ու խռովութիւններ էին յարուցանում նոցա դէմ։

Մակեդոնեան—Ասորական ինքնակալութեան ժամանակ արևելեան և ասորական եղբայրները Պաղեստինի բնակիչների համար «պանդուխտներ» էին համարվում։ Երուսաղէմի ծերակոյտը (սինեդրիոն) հրեղէն նշաններով մի լերան բարձրութիւնից հաղորդումէր միւսին ամեն ամսի սկիզբը—տօնական օրացոյցը կանոնաւոր պահպանելու համար։ Վերջերում այդ նպատակով համբաւաբերներ էր ուղարկում Ասորիք։ Մի քանի յայտնի դէպքերում արևելեան գաղթականութիւնը մի և նոյն պայմանների մէջ էր գտնվում, իսկ մի քանի բաներում նա համեմատաբար բարձր դիրք ունէր, քան նոյն իսկ հայրենի երկիրը։ Հեթանոս երկրների փոշին անգամ պիղծ էին համարում, բայց Ասորիքի հողն այնքան մաքուր ու սուրբ էր ճանաչուած, որքան նոյն իսկ Պաղեստինի հողը։

Ինչ որ վերաբերում է ժառանգականութեան անտեղծ անարատութեանը, այդ բանի մէջ Բաբելացիները իրանց աւելի բարձր էին համարում, քան իրանց Պաղեստինի եղբայրներին։ Նոքա պնդումէին թէ Եզրասն իւր հետ տանելով Պաղեստին գնացողներին, իրանից յետոյ երկիրը թողեց մաքուր ու նուրբ, որպէս ալիւր։ Նոցա կարծիքով՝ հրէաների տոհմաբանական անարատութեան վերաբերութեամբ բոլոր միւս երկրները Պաղեստինի հետ համեմատելով նման էին խմորուած զանգուածի, իսկ ինչ որ վերաբերում Պաղեստինին՝ նա միայն կարող էր հաւասարիլ Բաբելաստանին։ Նոքա հաւատացնում էին (չափազանցելով իհարկէ), որ եթէ բոլոր տոհմաբանական արձանագրութիւնները ու հետազօտութիւնները ի մի հաւաքուէին, մի քանի տարիւր ուղտի բեռն կը լինէին։ Լրիւ ու ճիշտ ազիւսակներ պահելու համար շատ հոգացողութիւն ու ջանք էին գործ դնում և այն էլ միայն նորա համար, որ ծագման անարատութիւնը կարող պահուի։ Թէ ի՞նչ կարևորութիւն էին տալիս այդ ազիւսակներին, այդ մենք կարող ենք իմանալ Եզրասի գործողութիւնից։ Յովսէփոս ևս մեծ նշանակութիւն էր տալիս այդ բանին։ Ինչ որ վերաբերում քահանայութեան ծագման պաշտօնական արձանագրութեանց, նոքա պահվումէին տաճարի մէջ։ Բացի դորանից հրէական իշխանութիւններն իրանց ձեռքի տակ ունէին ընդհանուր պաշտօնական արձանագրութիւն, որը յետոյ Հերովդէս հրամայեց այրել, որի պատճառը հասկանալի է։ Իսկ այդ օրից սկսած, ինչպէս ողբումէ մի բարբի,

հրէաների փառքը նսեմացաւ։

Սակայն արևելեան գաղթականութիւնը միայն ծագման անարատութեամբ չէր, որ կարող էր պարծենալ։ Նոցա կարծիքով Պաղեստինի բնակիչները շատ բաներում պարտական էին Եզրասին, այն ականաւոր Բաբելացուն, որ ըստ աւանդութեան կարող էր ազգին օրէնք տալ եթէ այդ փառքը նրանից առաջ Մովսիսին չը վիճակուէր։ Մի կողմ թողնելով զանազան բերանացի աւանդական հրամաններ, որոնք Թալմուդը վերագրում է նորան, մենք նորա արածների հետ բաւականին լաւ ծանօթանում ենք Ս. Գրքի միջոցաւ։ (Աւանդութեան համաձայն Եզրասը վերադարձաւ Բաբելոն և այնտեղ մեռաւ։ Իսկ Յովսեփոսն ասում է թէ նա մնում է Երուսաղէմում)։— Վերպարանափոխուած հանգամանքները նշանաւոր փոփոխութիւն յառաջացրին նոր յուդայական տէրութեան մէջ։ Մինչև իսկ խօսակցական և գրականական լեզուն նոյնը չէր, ինչ որ առաջ։ Հին ժամանակներում գործածուող դրութեան փոխանակ գաղթականները վերադառնալու ժամանակ իրանց հետ բերին այսպէս անուանեալ երբայական քառակուսի տառերը, որոնք հետզհետէ ընդհանուր գործածութիւն ստացան և ներկայումս հասարակաց են եղած *)։ Այն լեզուն, որով խօսում էին հրէաները թէ Պաղեստինում և թէ Բաբելաստանում **) արդէն ա՛չ թէ երբայական, այլ արամէական էր։ Պաղեստինում արևմտեան բարբառն էր գործածվում, իսկ Բաբելաստանում արևելեանը։ Արդարև հասարակ ժողովուրդը չէր գիտէր մաքուր երբայական լեզուն, որ այս ժամանակից սկսած արդէն գիտնական և ծերակուտական լեզու էր դարձել։ Մինչև անգամ կարիք էր զգացվում մեկնիչներ նշանակել, որ հասարակաց աստուածպաշտութեան ժամանակ Ս. Գրքի հատուածներն ու բարբառների քարոզները ժողովրդին թարգմա-

---

(*) Թէեւ նորա եզրի ժամանակ մուտ գործածին, բայց հին երբայական նշանագրերը, որ նման էին Սամարականին, տակաւ առ տակաւ տեղի տուին նոցա։ Նոցա կարելի է գտանել յիշատակարանների եւ դրամների վերայ։

(**) Հերոդեդոտը Պաղեստինի բնակիչների լեզուն նկարագրելիս ցոյց է տալիս, թէ նա երբայական գոյն ունենալու պատճառով կարող է երբայական—արամէական լեզուս ճանաչուիլ։ Երբայական եւ արամէական լեզուները պատկանում են լեզուների սեմական խմբին, որ տրոհվում է այս կերպ։—1)։ Հիւսիսային սեմականներ սւոնա-փիւնիկական, երբայական եւ արամէական (արեւմտեան եւ արեւելեան բարբառներ)։ 2)։ Հարաւային սեմականներ՝ արաբական եւ հիմեարական։ 3)։ Արեւելեան սեմականներ՝ ասորա-բաբելական սեպագիր։ Յօսեբեայ Պաղեստինում գործածուող բարբառի վերայ, ի հարկէ չի կարելի մտածել Աստիքի ոճագիծ ազդեցութիւնը, որ երեւումէր ինչպէս գաղթականութիւնից առաջ, նոյնպէս եւ յետոյ։ Այս երեք ճիւղերից արամէականը միւսներից աւելի սերտ կապ ունի երբայականի հետ։ Երբայականը արամէականի եւ արաբականի միջին տեղն է բռնում եւ գրականական տեսակէտից ամենահինը կարելի է անուանել։ Նոր բարբառի պաղեստին ներածելու հետ միասին յայտնվում են եւ նոր քառակուսի նշանագրերը։ Միշնան եւ նորան ցեղակից բոլոր գրականութիւնը մինչեւ Գ. դարը գրուած է երբայական կամ որ աւելի հաւանական է ասել, նորա նոր զարգացման լեզուով թարմուդը գրուած է արամէական լեզուով։

նէին՝ ճշմարիտ է՝ սկզբում թարգմանչին արգելուած էր իւր թարգմանութիւնը կարգալ կամ իւր թարգմանածը օրագրել՝ որովհետև երկիւղ էին կրում՝ թէ չըլինի՞ թարգմանութեանն ու բացատրութեանը մի և նոյն նշանակութիւնը տան՝ ինչ որ սկզբնագրին։ Մինչև անգամ Հաստատումէին՝ թէ երբ որ Ցովնաթան իր մեկնութիւնը գրեց մարգարէների վերայ՝ երկնքից ձայն եկաւ՝ որ ասումէր.—«Ո՞վ է նա՝ որ իմ գաղտնիքը յայտնումէ մարդկանց»։ Այնու ամենայնիւ այդպիսի մեկնութիւններ գոյութիւն ունէին ի վաղուց հետէ և նոցա գործածութիւնը թոյլատուութիւն էր ստացել իշխանութեան կողմից մինչև Քրիստոսի ծննդեան Բ. դարու վերջը։ Մեր ձեռքն հասած ամենահին մեկնութեանց երկուսից մեկը գրուած է Հնգամատեանի վերաբերութեամբ՝ իսկ միւսը մարգարէների վերաբերութեամբ և վերագրումն Ցովնաթանին։ Այս աշխատութիւնները թէև սկզբում Պաղեստինում կատարուեցան՝ սակայն այն ձևը՝ որով նոքա մեր ձեռքն են հասած ներկայումս՝ ցոյց է տալիս՝ որ նոքա պէտք դուրս եկած լինին Բաբելոնի դպրոցներից։ Նոր հանգամանքները՝ որոնց մէջ գտնվումէին հրեաները իւրեանց վերադարձի ժամանակ՝ յառաջացրին եթէ ոչ նոր օրէնսդրութիւն՝ գոնէ Մովսէսականին մի կերպ յարմարեցրած օրէնք։ Բարեպաշտութիւնն ու կրօնական եռանդն այժմ ուղղուած էր դէպի արտաքին ծէսերն ու օրինաց տառի ուսումնասիրութիւնը։ Այս հանգամանքի ծնունդն է համարվում Միշնան կամ երկրորդ օրէնքը՝ որի նպատակն է առաջինի ուսումնասիրութիւնն ու լրութիւնը *)։ Նա կազմում էր հրէից կրօնի ամբողջ վարդապետութիւնը՝ որի ուսումնասիրութեամբ զբաղուած էին իմաստունները՝ բաբբունիները՝ ուսումնականները՝ դպիրները և քարոզիչները։ Նորա ազդեցութեան հետևանքն է Միդրաշը (վենութիւն)՝ մի ասացուած՝ որ յե-

---

(*) Միշնան (երկրորդումն) թալմուդի մի մասն է։ Թալմուդ բառը եբրայերէն թամադ բառից է ածանցուել եւ նշանակումէ ուսումն։ Թալմուդն է մի գիրք՝ որ կազմել են հրէայ ռաբբիները իբր լրութիւն Ս. Գրքի եւ բովանդակումէ իւր մէջ զանազան խրատներ՝ երկու տեսակ թալմուդ կայ—մէկն է Երուսաղէմականը՝ որ գործածութեան մէջ չէ եւ միւսն Բաբելոնականը՝ որ բաժանվումէ երկու մասի։ Ա. մասն անուանվումէ Միշնա՝ Բ. մասը Գեմարա։ Միշնան գրուած է Քրիստոսի 189 թուին Ցուդայի ձեռքով՝ եբրայերէնից մաքուր լեզուով։ Գեմարան գրուած է պանազան ազգերի խառն լեզուներով՝ այն է՝ եբրայական՝ քաղդէական՝ ասորական՝ հին յունական եւ Հռովմէական լեզուներով՝ դորա համար էլ դժուար հասկանալի է եբրայական լեզուի մասնագէտներին անգամ։ Գեմարան Միշնայի եւ Ս. Գրքի վախճանական մեկնութիւնն ու բացատրութիւնն է։ Երկու տեսակ Գեմարա կայ՝ մէկն է Երուսաղէմի ուսումնականների եւ օրինականների կազմած մեկնութիւնը՝ միւսն է Բաբելոնացիներինը։ Երուսաղէմականը գրուած է 473 ին՝ Երուսաղէմացի Ռաբի Եքմոնի ձեռքով՝ իսկ Բաբելոնականը 573 ին՝ Ռաբինէ եւ Ռաւինայէ ռաբբիների ձեռքով։ Այս թուերի եւ պ. Ս. Տէր Գաբրիէլեանցի յօդուածում յիշուած թուերի մէջ տարբերութիւն կայ։ Տես Արարատ 1885 թ. երես 22 եւ Живопис. Обозрѣн. 1874 թ. "Человѣкъ" յօդուածի մէջ։)

Ծան. Մ. Փ. Դեօնէ։

տոյ սովորաբար տրվում էր Ս. Գրքի բացատրություններին և յորդորակներին։

Բոլոր ասածներից յետոյ հարկ չէ կայ հարցնել, թէ գաղթականների Բաբելոնից վերադառնալուց յետոյ առաջին դարում կային արդեօք կանոնաւոր աստուածաբանական ակադեմիաներ նոյն իսկ Բաբելոնում, թէ և շատ դժուար է սորա համար պատմական փաստեր բերելը, սակայն հաւիւ թէ կարելի լինի կասկածանք յայտնել, թէ եբրայական հաւատքը, որ այնքան մեծ և գործունեայ էր, կարողանար անտարբեր դիտուել դէպի ուսումը, այն հաւատքը, որ իւր վերայ էր կենդրոնացրել Պաղեստինում եղած իւր եղբայրների միաբն ու ակնկալութիւնը։ Հիլլէլն ինքը երբ դեռ աղքատ, անոք, անյայտ աշակերտ էր, ստիպուած էր ուղեւորուիլ այնտեղ հետևնակութիւն, ուսումն ու գիտութիւն ստանալու, որոնց նա այն ժամանակ իւր սեպհական երկրում չէր կարող գտնել։ Այս հանգամանքն ինքն ըստ ինքեան մտածել է տալիս, թէ ուսումը գոնէ քաջալերութիւն էր գտնում Բաբելաստանում։ Դորանից յետոյ Բաբելոնական դպրոցներն արագ-արագ բարձրացան և նեմմոյրին Պաղեստինի դպրոցների շուքը։

Պաղեստինի բնակիչները որքան էլ որ խրոխտանային Բաբելոնականների վերայ, որքան էլ որ ասէին, թէ նոքա յիմար են և թշուառ (ուտումն միայն չորարեկ հաց), սակայն ինքեանք պէտք խոստովանէին և չուրանային այն փաստը, որ «երբ օրէնք անկան ի մոռացօնս», նոցա վերականգնողը Բաբելոնացի Եզրան էր։ Երբ նա երկրորդ անգամ մոռացութեան մատնուեց, Բաբելոնացի Հիլլէլն եկաւ և նորից սովորեցրուց, և երբ, չը նայելով այդ բանին, նա երրորդ անգամ մոռացութեան մէջ ընկաւ, այն ոարբին, որ օրէնքը նորից նոցա յանձնեց, գարձեալ Բաբելոնացի էր։

Ա՛յսպէս էր եբրայական այն պանդխտութիւնը, որ նոյն իսկ սկզբից կազմուեր Ծուդայի ազգի գլխաւոր մասն ու ոյժը և որի մէջ պահուած էր նորա բոլոր կրօնական ապագան։ Այս պանդխտութիւնը պէտք է դասել պատմական մեծ կարևորութիւն ունեցող փաստերի հետ, որովհետև Երուսաղէմի աւերմունքից յետոյ Պաղեստինի հոգևոր գերիշխանութիւնն անցնում էր Բաբելաստան և որովհետև բարբառնական հրէութիւնը քաղաքական մրրիկների ու տագնապի ժամանակ ինքնայօժար կամօք տեղափոխուում էր դէպի իսրայէլական հին պանդխտութեան տեղը։ Բայց բաբելոնական պանդխտութիւնն իւր թևերը տարածել էր ամեն կողմ, այդ ժամանակից գեռ շատ առաջ Հայաստանի վերայով նա հասել էր Կովկասին ու Սև ծովի ափերին, իսկ Մարաց երկրի վերայով—Կասպիականի ափերին։ Դէպի հարաւ նա տարածուել էր մինչև Պարսկական ծոցը և Արաբիայ ամբողջ տարածութեան վերայ։ Թէև երջանիկ Արաբիան և Հոմերիտների երկիրը կարող էին իրանց առաջին հրէական գաղթականներն ընդունած լինել Եթէոպիոյ հակապիր եղերքներից։ Դէպի արևելք նա գնացել հասել էր մինչև Հնդկաստան։ Ամեն տեղ մենք վկայութիւններ ենք գտնում այս պանդխտանների վիճարկութեամբ և ամենայն տեղ, ուր էլ որ գնացել են նոքա, ամենասկրտ յարարկութիւն են պահել Պաղեստինի բարբառնական քահանայապետու-

Թեման հետ։—Բարելոնացիները հարստութիւնն ու ազդեցութիւնը վաճառականութեամբ էին ձեռք բերում, թէև չէին արհամարհում և երկրագործութիւնը։ Նոցա կարաւաններն արևելքից արևմուտք էին փոխադրում թանկագին գորգեր և անկուածներ, ինչպէս և գնոց համեմունք, որոնք Պաղեստինից սովորաբար անցնում էին դէպի Փիւնիկեցւոց նաւահանգիստները, ուր պատրաստի կանգնած էր հրէայ ղրամատէրներին պատկանեալ վաճառականական նաւերի ամբողջ տորմիղ, որի գործն էր տանել սփռել այդ առարկաները աշխարհիս ամեն մասում։ Այս վաճառաշահ իշխանները շատ զգայուն էին դէպի այն ամենը, ինչ որ կատարվում էր դրամական և քաղաքական աշխարհում։ Մենք գիտենք, որ նոցա ձեռն էր տէրութեան գաղտնիքները և նոցա էր յանձնվում դիւանական գործերը։ Միայն ուրիշ ոչ մի ազգի մէջ այդքան մեծ չէր հրէայ ազգաբնակութեան թիւը, որքան Բաբելոնիայում։ Ասորեստանի ժամանակ նոցա թիւը հազարներով էր հաշվվում, իսկ այս վերջինի անկումից յետոյ, որ նոցա բաժանումն էր Պաղեստինից, իսկ այս վերջինի հնչերակի ծայրը, ինչպէս նկատում էր Փիլոնը, վերջանում էր Բաբելոնում։ Այս գաղթականութեան ամենահետաքրքիր մասում Ներսէսի ընդարձակ հայրապետութեան ժամանակ Սօղոս Տարսոնացին անցկացրեց ամբողջ երեք տարի լուռ մտախոհութեանց մէջ, որոնք կարևոր եղան նորա երկրորդ անգամ Երուսաղէմ գալուն, ուր իր եղբայրակիցների շրջանում գործելու բուռն ցանկութեամբ ու եռանդով առաջնորդուած և երկար ժամանակ այս հրէաների մէջ մնալով, բորբոքուած, այրուած, և նրն իսկ հրէաներից դրդուած, դիմեց այն հրաշալի գործին, որ եղաւ նորա կեանքի կոչումը և խորհուրդը։ Այդ մի և նոյն հասարակութեան մէջ գրեց ու աշխատեց Պետրոսը և այն՝ խիստ անչաջող պայմաններում *), որոց մասին եթէ կամենում ենք հասկացողութիւն կազմել, բաւական է որ ուշադրութիւն դարձնենք, թէ ինչպէս այդ հասարակութիւնը դեռ Ք. դարու վերջերում պարծենում էր, թէ իր մէջ քրիստոնէական կրօնը դաւանող ո՛չ մի հրէայ չի կարելի գտնել։

Այս գրուածները չեն վերաբերում տասն ցեղերի այն պանդուխտներին, որոնց ճանապարհորդութիւնը հետքեր չէ թողել և որոնց թափառական կեանքն այնքան խորհրդաւոր, ծածկուած և մթին է մնացել, որքան նոցա համար պատրաստուած վիճակը։ Թալմուդականները չորս տեղ են ցոյց տալիս, ուր նոքա կարող էին գաղթականութիւն հաստատել։ Սակայն մենք եթէ նոցա մասի ու անորոշ լուրերին հաւատ էլ ընծայենք, այնուամենայնիւ չենք կարող այս երկրներից գտնել երկուսի տեղը լիակատար ճշտութեամբ որոշել։ Ինչ որ այժմ նոցա մասին յայտնի է միայն այս բանն է ցոյց տալիս, թէ նոցա գաղթականութեան ճանապարհը ուղղուած է եղել դէպի հիւսիս Հնդկաստանի, Հայաստանի, Մարաց լեռների և Կասկաղի վերայով։ Յովսէփոսն ասում է, թէ նոքա շատ բազմաթիւ էին և բնակվում էին Եփրատի միւս կողմերում։ Միշնան լռութեան է տալիս և ոչինչ չի ասում նոցա բնակութեան տեղի մասին միայն դատողութիւններ է յայտնում ապագայում նոցա վերադառնալու մասին։

(*) Գաղ. Ա. 17. Ա. Պետր. Ե. 13։

8ատն ցեղերի վերաբերութեամբ կայ հետևեալ հաստատութեան կարօտ վարկածը (հիպօտեզա) թէ որովհետև նոքա յամառութեամբ հետացան Իսրայէլի Աստուծոյ և աստուածապաշտութիւնից, վասնորոյ իսպառ բաժանուեցին Նորա ժողովրդից, ուրեմն նորից Իսրայէլացի դառնալու համար նոքա պէտք է վերածնէին ի վերջին աւուրս։ Նորագոյն հետազօտութիւնները ցոյց են տալիս, թէ նեստորականները պէտք է առաջացած լինին (գուցէ) անհետացած եբրայական ցեղերից։ այդ միևնոյն կարծիքը կայ և և Աւղանցիների մասին, այն ուսոբիները, որոնք օրինապրեցին ներկայումս յարգել ոչ—հրէի և հրէուհու ամուսնական կապը, ենթադրումէին, թէ այդ ոչ—հրէան կարող է սերուած լինիլ անհետացած տասն ցեղից։ Բացի դորանից ենթադրումեն, թէ ամենավերջին տեղափոխութեանց ժամանակ գոնէ նոցա մի մասը միացաւ իւր եղբայրների հետ։ Ցայտնի է, որ Պաղեստինում բնակուող անհատները, ինչպէս և ուրիշ կողմերում եղածները կարող էին իրանց ծագումը նոցանից առնել*)։ Ի վերայ այսր ամենայնի տասն ցեղերի ամենանշանաւոր մեծամասնութիւնը ինչպէս Քրիստոսի ժամանակ, նոյնպէս և մեր օրերում եբրայական ազգի համար կորած պէտք է համարել։

(կըշարունակուի) Մեսրոպ ՔՀՀ. Գեօնչեան։

(*) Ղուկ. Բ. 36. «եւ անդ էր Աննա մարգարէ, դուստր Փանուէլի՝ յազգէ Ասերայ . . . »։

ԱՋԳԱՅԻՆ·

Հաւատն զտեալ ընդ կանոնադրութիւն եւ ընդ ծրագիրն վասն ծխական երկսեռի միդասեան եւ երկդասեան դպրոցաց Հայոց՝ հաստատեմք՝ ի վերայ իսկականին ստորագրեալ է

ՄԱԿԱՐ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԿԱՆՈՆՔ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԾԽԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ ՀԱՅՈՑ

Ա. ՀԱՆՐԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ

1· Եկեղեցական-Ծխական Ուսումնարանք Հայոց կարգեալ են առ եկեղեցւօք և վանօրէիւք ի տալ մանկանց երկուց սեռից քաղաքաց և գիւղօրէից դասկրեանական կրթութիւն և ղուսումն կարևորագոյն գիտելեաց·

2· Եկեղեցական Ծխական Ուսումնարանք բացեալ լինին հրամանաւ Վեհափառ Հայրապետի Ազգիս և կառավարին ընդ ձեռն թեմակալ Առաջնորդաց առանձինն հրահանգաւ, սահմանելով ի նորին Վեհափառութենէ·

3· Եկեղեցական-Ծխական Ուսումնարանք բաժանին յերկուս կարգս՝ միդասեան և երկդասեան·

4· Ծամանակ ուսման աշակերտաց և աշակերտուհեաց սահմանի՝ վասն առաջնոյ կարգին՝ ոչ պակաս քան զերիս ամս, իսկ վասն երկրորդին՝ ամս հինգ·

5· Եկեղեցի, որ կրնութեամբ արդեանցն անձեռնձաս լիցի պահել զառանձինն Ուսումնարան, ըստ կարգադրութեան Առաջնորդի կարէ օժանդակել պահպանութեան պլուզմ Ուսումնարանի·

6· Ի մեանց մերձաւոր գիւղօրայք գումարելով ի մի զեկեղեցական և գժողովրդական գումարս իւրեանց, կարեն պահել զմի կենտրոնական Ուսումնարան, զորոյ զտեղին ընտրեսցէ Առաջնորդն·

7· Եկեղեցական Ծխական Ուսումնարանք տղայոց և օրիորդաց պարտին լինել ամենայն ուրեք որիշք ի միմեանց ըստ ամենայն պարագայից, թէպէտ և երկոքին ևս գտանիցին ի նմին գաւթի եկեղեցւոյ·

8· Ամենայն Եկեղեցական Ծխական Ուսումնարան պարտի ունել զկնիք ըստ որոշեալ ձևոյ (օրինակ թ· 1)·

Բ. ՑԱՂԱԳՍ ԱՌԱՋՆՈՐԴԱՑ·

9· Առաջնորդք վիճակաց իւրեանց իվեհափառ Հայրապետէն զերաւունս բանալոյ զեկեղեցական Ծխական Ուսումնարանս պարտին յայտնել Նորին Սրբութեան թէ՝ յորում տեղւոջ և ո՛րպիսի ուսումնարան կամիցին բանալ և որո՛վ արդեամբ պահպանեսցի այն·

10· Եկեղեցական-Ծխական Ուսումնարանք պահպանին ըստ կարգադրութեան Առաջնորդաց՝ եկեղեցական արդեամբք, թոշակօք աշակերտաց և ա-

շակերտուհեաց և կամաւոր նուիրանօք ժողովրդեան։

11. Առաջնորդք տան հրաման առնուլ զմասն ինչ *Եկեղեցական արդեանց՝ սահմանելով զայն ըստ չափու արդեանց եկեղեցւոյն և ժողովուրդն օրինաւոր խոստմամբ յանձն առնու լրացուցանել զդումարն, որ պիտոյ լցեր ի պահպանութիւն Ուսումնարանին։*

12. Առաջնորդք փոյթ կալցին զի Եկեղեցական Ծխական Ուսումնարանք պահպանեսցին անխափան, իսկ եթէ դիպեսցին պատճառք արգելուիթք պահպանութեան միոյ իրիք *Ուսումնարաց՝ նոքա՝ յետ զամենայն հնարս ի գործ դնելոյ առ ի զառաջս առնուլ փակմանն, փակեն զայնպիսին և անյապաղ յայտնեն Վեհափառ Կաթուղիկոսին, ցուցանելով զմանրամասն հանգամանս գործոցն։*

13. Առաջնորդք առաջի առնեն *պ*Հոգաբարձուս *ի հաստատութիւն Վեհափառ Կաթուղիկոսի։*

14. Առաջնորդք *զկարգմանեն և զարձակմանեն ուսուցչաց և վարժուհեաց յայտնեն անյապաղ Վեհափառ Կաթուղիկոսին։*

15. Առաջնորդք *զգաւառական Ծխական ուսումնարս կառավարեն ընդ ձեռն գործակալ քահանայից։*

16. Թեմակալ Առաջնորդք *յաւարտ ուսումնական տարւոյ զամենայն տեղեկագիրս վերաբերեալս համօրէն ուսումնարանաց վիճակին, մատուցանեն Վեհափառ Հայրապետին։*

Գ. ՅԱՂԱԳՍ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԱՑ.

17. Իւրաքանչիւր Ուսումնարան *ունի Հոգաբարձուս, թիւ որոց ի քաղաքըս որոշի ի Թեմակալ Առաջնորդաց՝ ըստ հանգամանաց տեղւոյն, իսկ ի գիւղօրայս թիւ Հոգաբարձուաց պարտի լինել երեք, յորոց մինն է տեղական քահանայն, ըստ որոշման Առաջնորդի, միւսն է երեսփոխան եկեղեցւոյն և երրորդն ընտրի ի հասարակութենէ գեղջն եռամեայ ժամանակաւ։*

18. Ցաւարտ ուսումնական տարւոյ *Հոգաբարձուք մատուցանեն Առաջնորդաց ընդ ձեռն յաջորդաց կամ գործակալաց զտարեկան հաշիւս մտից և ծախուց, ևս և զընդարձակ գրաւոր տեղեկութիւն զընթացից և զյառաջադիմութենէ Ուսումնարանին, զոր պատրաստելոց է Տեսուչն կամ աւագ ուսուցիչն, յաւելլով առ այն զկարեւոր վիճակագրական տեղեկութիւնս ըստ սահմանեալ ձեւոյ, նաև զհանգամանս պաշտօնավարութեան ուսուցչաց և վարժուհեաց (օրինակ Թ. 4. և 5)։*

19. Ութիկ համօրէն պաշտօնէից *սահմանի ի Հոգաբարձուաց ըստ հանգամանաց տեղեացն և անձանց՝ հայելով ի գրամական կարողութիւն Ուսումնարանին։*

20. Հոգաբարձութիւն Ուսումնարանին *փոյթ ունի, զի ըստ չափու կարողութեան Ուսումնարանի գտանիցին գրադարան և զանազան ուսումնական և դասական պիտոյք։*

21. Հոգաբարձութիւնն *ստանայ Առաջնորդէ զերկուս ժապաւինեալ մատեանս, յորոց ի միում ցուցակագրին ամենայն կահ և կարասիք Ուսումնարանին, ևս և գրեան և այլ ուսումնական պիտոյք, իսկ յերկրորդում նշանակին մուտք և ծախք Ուսումնարանին (օրինակ Թ. 2 և 3)։*

Դ. ՅԱՂԱԳՍ ՈՒՍՈՒՑՉԱՑ

22. Տեսուչք, *ուսուցիչք և վարժուհիք ընտրին ի Հոգաբարձութենէ և հաստատին Առաջնորդաց։*

23. Ի պաշտօն ուսուցչութեան *հրաւիրին անձինք, որք յաջողութեամբ աւարտեալ իցեն զընթացս ուսման ի Թեմական Դպրոցս Հայոց և յարքունի*

միջնակարգ ուսումնարանս իսկ վարժուհիք ընտրին յայնպիսեաց որք վկայեալ էին բարի վարուք և մանկավարժական հմտութեամբ իւրեանց։

Յանձնարարեմ։ Եթէ առաջնորդք հարկ համարիցին կարգել յուսուցչութիւն զանձինս, որ՝ թէև չունին զպահանջեալն վկայագիր, բայց յայտնիք են բազմամեայ փորձառութեամբ իւրեանց յասպարիսի մանկավարժութեան, պարտին յիւրաքանչիւրում նուագի առանձինն թոյլտուութիւն հայցել վասն այնպիսեացն ի Վեհափառ Կաթուղիկոսէն։

24· Կառավարութիւն միոյ միոյ ուսումնարանի ըստ ուսումնական մասին յանձնեալ լինի ի Հոգաբարձութենէ Տեսչի կամ աւագ ուսուցչի, որք և պատասխանատու են վասն կանոնաւոր և արդիւնաւէտ դասաւանդութեան, վասն բարեկարգութեան ուսումնարանաց և առհասարակ վասն ճիշտ կատարման ամենայն պարտաւորութեանց վերաբերելոց տեսչութեան ուսումնարանաց։

25· Տեսուչն կամ աւագ ուսուցիչն պահէ ղեղուկ աշակերտաց կամ աշակերտուհեաց (օրինակ Թ. 6) և հսկէ պի ուսուցիչք և վարժուհիք ճշտիւ և անթերի կատարեսցեն զպաշտօնս իւրեանց։

26· Տեսուչն կամ աւագ ուսուցիչն պարտի առաջի առնել Հոգաբարձութեան ըկնսամեայ համառօտ տեղեկագիր ի Յունվար ամսեան և զտարեկան մանրամասն տեղեկագիր ի Յունիս ամսեան։

27· Ամենայն ուսուցիչ և վարժուհի պարտի նշանակել ի մատենի զանուանս բացակայ աշակերտաց և աշակերտուհեաց, ևս և պատարկայս ուսման իւրաքանչիւր աւուր (օրինակ Թ. 7)։

28· Տեսչին կամ աւագ ուսուցչին պարտք են ի կիւրակէս և ի տօնական աւուրս խմբովին տանել զաշակերտս և զաշակերտուհիս ի ժամ Ս. Պատարագի յեկեղեցի, նախապէս բացատրելով նոցա զկարգ տօնին։

Յանձնարարեմ։ Ուսուցիչք և վարժուհիք միշտ պարտին ընդ մանկտւոյն գնալ յեկեղեցի։

Ե. ՅԱՂԱԳՍ ԱՇԱԿԵՐՏԱՑ ԵՒ ԱՇԱԿԵՐՏՈՒՀԵԱՑ

29· Թիւ աշակերտաց կամ աշակերտուհեաց յիւրաքանչիւրում բաժանման չպարտի լինել աւելի քան զվաթսուն իսկ եթէ ըստ պիտոյից տեղւոյն հարկ լիցի միաւորել ի միում սենեկի զերկուս կամ նաև զերիս բաժանմունս, այն դէպս իսկ թիւ աշակերտաց կամ աշակերտուհեաց ոչ կարէ առաւելուլ քան զվերոյգրեալ թիւս։

30· Ի պահանջել հարկին մարթ է բանալ առ միում միում բաժանման մէն մի ղուգընթաց բաժանմունս հանդերձ առանձինն ուսուցչօք կամ վարժուհեօք։

31· Ցառաջին բաժանումն առաջնոյ դասարանի Եկեղեցական-Ծխական Ուսումնարանաց ընկալեալ լինին մանկունք որոց հասակ չիցէ պակաս քան զութ ամ և ոչ աւելի քան զտասն և ըստ այսմ համեմատութեան ի յաջորդ բաժանմունս։

32· Ցանկայողք մտանել յուսումնարան մատուցանեն ընդ խնդրագրոց զվկայական ծննդեան։

33· Ժամանակ ընդունելութեան աշակերտաց և աշակերտուհեաց է հր կիցս ի տարւոջ, այսինքն ի սկիզբն տարեկան ուսմանց և ի Յունվարի։

Յանձնարարեմ։ Աշակերտք կամ աշակերտուհիք որք մտանիցին ի Յունվար ամսեանն, պարտին պատրաստ լինել տալ քննութիւն յընթացից առաջին կիսամեկի։

34· Աշակերտք և աշակերտուհիք ընդ ուսուցչաց և վարժուհեաց իւրեանց հաղորդին ս. խորհրդոյ երկիցս ի տարւոջ, յաւուրս Ս. Ծննդեան և Յարութեան Տեառն։

35· Իւրաքանչիւր աշակերտ կամ աշակերտուհի բացի վկայեալ չքաւո-

բաց հատուցանէ զնշանակեալ ի Հոգաբարձութենէ գումար ինչ յաղագս ուսման և դասական պիտոյից։

Զ. ԾԱՂԱԳՍ ՈՒՍՄԱՆ

36. Առարկայք ուսման Եկեղեցական Ծխական Ուսումնարանացն սահմանին առանձին ծրագրաւ։

37. Դասատուութիւն առարկայից լինի Հայ լեզուաւ, բայի Ռուսաց լեզուէ Ռուսաց պատմութենէ և յաշխարհագրութենէ Ռուսաստանի որք առանձին Ռուս լեզուաւ։

38. Ցաւարտ ընթացից ուսման աշակերտաց և աշակերտուհեաց լինի հարցաքննութիւն առաջի Հոգաբարձուաց և ծնողաց աշակերտելոցն։

39. Մանկունք, որք յառաջադէմ երևեսցին ի հարցաքննութիւնս, տեղափոխեսցին ի չորրդ բաժանմունս և աւարտողքն ընդունին զվկայական ուսման։

40. Աշակերտք և աշակերտուհիք, որք ոչ յառաջադիմեսցեն, կարեն մնալ ամ մի ևս ինմին բաժանման։

41 Ցաւարտ հարցաքննութեան կազմի արձանագրութիւն ստորագրութեամբ Հոգաբարձուաց, ուսուցչաց և վարժուհեաց, յորում նշանակին որպիսիք հարցաքննութեան և անուանք աշակերտաց և աշակերտուհեաց, որք արժանաւոր իցեն փոխադրութեան կամ վկայագրոյ. ևս և անուանք աշակերտաց և աշակերտուհեաց մնացելոց ի նոյն բաժանմունս կամ իսպառ արձակելոց յուսումնարանէն, և արձանագրութիւնն այն առաքի ի հաստատութիւն Առաջնորդի իձեռն յաջորդաց կամ գործակալ քահանայից որ վաւերացուցեալ զայն՝ յետս դարձուցանէ ի գործադրութիւն և ի պահպանութիւն յուսումնարանին։

42. Տեսուչն կամ աւագ ուսուցիչն պատրաստէ վկայագիրս (օրինակ Թ. 8) ստորագրութեամբ Հոգաբարձուաց և իւր ինքեան և անցուցեալ զայնս յատանձին մատեան Ուսումնարանին (օրինակ Թ. 9), տայ ծնողաց մանկըտւոյն կամ խնամակալաց նոցա, ընդունելով ի նոցանէ ստորագրութիւն ի մատենին։

43. Ժամանակ ամարային արձակուրդի որոշի ի քաղաքս ի 15էն Ցունիսի ց25 Օգոստոսի, իսկ ի գիւղօրայս սահմանի ըստ տեղական հանգամանաց, այն է ի ժամանակի հնձոց այգեկութից և այլն, ըստ որոշման Հոգաբարձութեան, զոր միանգամ ընդ միշտ հաստատէ Առաջնորդն, իսկ ուր դոյ Ցաջորդ՝ Ցաջորդն։

44. Աշակերտք և աշակերտուհիք Եկեղեցական Ծխական Ուսումնարանաց արձակին յաւուրս կիրակիից և տօնից, նշանակելոց յատանձին ցուցակի։

ԹԻՒ ԴԱՍՈՒՑ ՅԵՕԹՆԵԿԻ

ՑԵԿԵՂՅԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՏՊՊՑՈՑ

ԴԱՍԱԲԱՆՔ	Ա.			Բ.		Գումար
ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	ա.	բ.	գ.	դ.	ե.	դասուց
Առաջկայ՝						
Կրօն	2	2	2	1	1	14
Հայոց լեզու	6	6	6	5	5	28
Ռուսաց լեզու	6(*)	6	6	5	5	22/6(*)
Թուաբանութիւն	4	5	5	3	3	20
Պատմութիւն Հայոց և Աշխարհագրութիւն Հայաստանի	»	»	»	3	3	6
Պատմութիւն Ռուսաց և Աշխարհագրութիւն Ռուսաստանի	»	»	»	3	3	6
Ընդհանուր Աշխարհագրութիւն	»	»	»	2	2	4
Բնական պատմութիւն	»	»	»	2	2	4
Երգեցողութիւն	2	2	2	2	2	10
Վայելչագրութիւն	2	3	3	1	1	10
Դծագրութիւն	2	2	2	»	»	6
Գումար	18/6(*)	26	26	30	30	130/6*)

Ծանօթութիւն. (*) 6 կէս ժամք յերկրորդում՝ կիսամեկի:

ԹԻՒ ԳԱՍՈՒՑ ՅԵՕԹՆԵԿԻ

ՑԵԿԵՂՑԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՑ ·

ՕՐԱՊՈՒՐԴՑ

ԴԱՍԱՐԱՆՔ / ԲԱԺԱՆՄՈՒՆՔ	Ա·			Բ·		Գումար
	ա·	բ·	գ·	դ·	ե·	դասուց
Առաւկայ՝						
Կրօն · · · ·	2	2	2	3	4	13
Հայոց լեզու · · ·	6	6	6	5	5	28
Ուսուց լեզու · ·	6(*)	6	6	5	5	22/6(*)
Թուաբանութիւն · ·	4	4	4	3	2	17
Պատմութիւն Հայոց եւ Աշխարհագրութիւն Հայաստանի · · · ·	»	»	»	3	3	6
Պատմութիւն Ուսուց եւ Աշխարհագրութիւն Ուսուցչութեան · · ·	»	»	»	3	3	6
Ընդհանուր Աշխարհագրութիւն · · ·	»	»	»	2	2	4
Բնական պատմութիւն ·	»	»	»	2	2	4
Երգեցողութիւն · ·	2	2	2	»	»	6
Վայելչագրութիւն ·	1	2	2	1	1	7
Գծագրութիւն · ·	1	2	2	»	»	5
Ձեւագործ · · ·	2	2	2	3	3	12
Գումար	18/6(*)	26	26	30	30	130/6(*)

Ծանօթ–ի՛ւն (*) կէս ժամ յերկրորդում կիսամեկ։

Հրահանգ և ծրագիր ուսման կրօնագիտութեան վասն Եկեղեցական — Միաւական միջատեան և երիկոտեան ուսումնարանաց Հայոց։

Կարևորագոյն քան զամենայն ուսմունս ատանդելիս Եկեղեցական Ծխական Ուսումնարանս պարտի լինել ուսումն կրօնի՝ ըստ դաւանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ իբրև ուսումն այնպիսի, որով անդամք եկեղեցւոյ ի տղայ տիոց անտի դաստիարակին ի քրիստոնէական բարեպաշտութեան, այսինքն է՝ յուսմունս դերագոյն Հաւատոցն և յուսմունս պարտուց մարդկան առ Աստուած, և առ ընկերս և առ անձինս իւրեանց։

Ուսումն կրօնի առ հասարակ բաժանի ի քանի ինչ մասունս, յորոց կարևորքն են՝ Աղօթք, Պատմութիւն Ս. Գրոց Քրիստոնէական վարդապետութիւն, Ծանօթութիւն գծիսից և գարարողութեանց եկեղեցւոյ։ Պատմութիւն քրիստոնէական եկեղեցւոյ։ Այսքիկ ամենեքեան ատանդին յայլ և այլ չափս և ուսմունս և յայլ և այլ եղանակս յուրոյն ուսումնարանս՝ ըստ դասակարգութեանցն։ ըստ այսմ և ի ծխական եկեղեցական ուսումնարանս։ այլ դի անհնարին է և անպատեհ առ տեղւոյս ճառել զայնցանէ ամենեցուն՝ յիշեցուք համառօտակի զքանի ինչ պայմանս կարևորս վասն արդիւնաւորութեան կրօնական ուսմանցն։

Նախ՝ յուսուցման աղօթից փոյթ ունիցի ուսուցիչն այնպէս տպաւորել ի սիրտս մանկանց զաղօթս բարեպաշտութեան զի նոքա ոչ միայն կրկնեսցեն զբառս սերտ ի բերան ուսեալս, այլ գիտակցութեամբ և բոլորով սրտիւ ուշդնեսցեն զմիտս առ Աստուած և զաղօթսն կարդասցեն երկիւղածութեամբ իմն և պարկեշտութեամբ և խոնարհութեամբ։ Առ ի տրամադրելոյ յայս զմանկունս՝ ոչինչ են պիտոյ հարկադրանք և հրամանք, այլ զի ուսուցիչն յառաջ քան զամենայն ջերմեռանդն բանիւք և համոզական քաղցրութեամբ զարթուսցէ ի սիրտս մանկանց սէր անկեղծ առ Հայրն երկնաւոր։ Արարիչն և նախախնամողն, որում փառս տամք և գոհութիւն վասն անհուն բարեացն և մարգասիրութեանն և առ որ գիմիմք ինդլ ուսածովք յամենայն գործս մեր։ Առ այս յոյժ օգտակար է յորժամ ուսուցիչն ինքնին ի սկզբան անգ գաստատութեան աղօթս արասցէ սրտաուչ բանիւք և անկեղծութեամբ առաջի մանկանց և լուռ մանուկքն նոցա՝ զոր օրինակ՝ վասն հիւանդ ընկերի ուրուք առողջութեան, վասն մխիթարութեան ի հոգւոյն սրբոյ վըշտացելոյ ուրումն բարեկամի, վասն անփորձութեամբ անցուցանելոյ զգիշերն և վերստին արժանանալոյ ի տեսութիւն իրերաց, վասն պտղոյութեան և յաջողութեան կենաց ծնողացն բարերարաց իւնամակալաց նոցն։ Եւն։ Այսօրինակ նախակրթանք յաղօթս պատրաստեսցեն զմանկունս յայն՝ զի յառաջնոց իսկ ուսուց ուսմանն հայիսցին նոքա յաղօթս, որպէս ի յաւելուած և ի բդխուած սրտից իւրեանց և յապագայս յառնելն զկեղեցական աղօթս՝ կրկնեսցեն զիմաստս նոցին իբրև յանձանց ինչ ինչ ասացեալս, և արասցեն ի նոսա ըստ դիպաց և ըստ պատշաճից յաւելուածս և անձնական խընդրուածս։

Յետ այսր նախապատրաստութեան կրօնուսոյցն ուսուցչ զհակիրճ մաքսիմս և զաղօթս, ապա զընդարձակն, քաղելով զայն ի ծաւագրոց եկեղեցւոյս Հայոց։ Մանկան մաղթանք և աղօթք բացատրեսցին նախ յաշխարհիկ լեզու և յորժամ կատարելապէս ըմբռնեալ իցէ մանկանց զիմաստս նոցին՝ պահանջեսցի և ընդունացի սերտումն ի գրոց լեզուս։

Ուսուցման Սրբազան Պատմութեան հնոյ և նորոյ կտակարանաց մնծապէս օգտակար է, եթէ ուսուցիչն յետ պատմելոյ զգան ընթերցցի և բացատրեսցէ աշակերտաց Հատուածս ի Ս. Գրոց, վերաբերեալս նիւթոյ դասին։ Կարևոր է նմանապէս խելամուտ առնել զմանկունս բարոյական և կրթական իմաստից պատմութեանն տալով նոցա զգալ զաղդեցութիւն աստուածային ուսմանց ի հոգիս իւրեանց զի մի լինիցի գաս կրօնագիտութեան լոկ մեքե-

նոյական երկնութիւն սերունդ քառից. Հնոյն՝ և ի գործս քրիստոնէական վարդապետութեան և բացատրութիւնս եկեղեցական տօնից։

Ի զարգացումն կրօնական կենաց մանկանց՝ հարկ անհրաժեշտ է, զի նոքա, մանաւանդ ի կիւրակէս և ի հանդիսաւոր աւուրս յաճախեսցեն յեկեղեցի՝ մասնակցելով ըստ կարողութեանցն յերգեցողութեան և սպասաւորելով։ Մեծ լիցի օգուտն եթէ ուսուցիչն կրօնի ինքնին ածիցէ զաշակերտս իւր յեկեղեցի առաջնորդ կալով նոցա և աստ իրրև օրինակ կենդանի։ Զէ ինչ տարակէպ յիշել աստէն անցողաբար զի ի տիս մանկութեան, յորժամ առաւել պատչն են սիրտքն՝ հակամէտ են մանկունք ընդունել օրինակ անձանց զամենայն զոր տեսանեն ի վարս մանաւանդ առաջնորդաց իւրեանց և դաստիարակաց։ սմին իրի պարտ է ուսուցչին կրօնագիտութեան կշռել զանձն իւր և պատրաստել օրինակ կենդանի վասն մանկանց յամենայն ինչ, յորս կամի առաջնորդել։ ունելով օրինակ զմեծագոյն Վարդապետն աստուածային ուսմանց, որ նախ առնէր միշտ և ապա ուսուցանէր։ Ո՛չ կարէ ուսուցիչ զբ պատուաստել ի սիրտս և ի հոգիս աշակերտելոցն զորս ոչ կրէ ի սրտի իւրում և ի հոգւոյ, և ոչ ուղղել ի վարս առաքինականս, եթէ ինքնին չունիցի զգայութիւն ուղղութիւն ի վարս իւրում։ Ա՛յս առաջին պահանջք են յուսուցչէն, զորով եթէ զանց առնիցէ՝ ոչ կարէ տպաւորել ի սիրտս մանկանց զուսմունս քրիստոնէական հաւատոյ, իրրև զպէտս հոգևոր կենաց և պատրաստել զայնս աղբիւր առաքինական վարուց և անկիղծ բարեպաշտութեան։

II. Դասք.

Ա. ՏԱՐԻ.

Նախապատրաստութիւն աղօթից։ Տէրունական աղօթք։ «Առաջնորդեա մեզ Տէր Աստուած մեր»։ «Անկեալ առաջի քո»։ «Տէր մի՛ դարձուցաներ զներսոս քո չինէն»։ «Պահպանեա զմեզ Քրիստոս Աստուած»։ «Զառաւօտու աղօթս և զբանաւոր պաշտօնս»։ «Տէր Աստուած մեր, Դու պահեա զմեզ ի գիշերիս յայսմիկ»։

Մանր պատմութիւնք բարոյախրատականք, քաղեալք ի Ս. Գրոց և յայլուստ՝ ըստ չափու հասկացողութեան մանկանց և ըստ հանգամանաց առօրեայ կենացն, բերանացի աւանդմամբ յաչխարհիկ լեզու։

Բ. ՏԱՐԻ.

«Գոհանամք զՔէն Տէր Աստուած մեր, որ զարթուցեր»։ «Լուր ձայնից մերոց, Տէր Աստուած մեր»։ «Աչք ամենեցուն ի Քեզ Տէր յուսան»։ «Փառք Քեզ Տէր, փառք Քեզ թագաւոր փառաց»։ «Սուրբ ես Տէր Աստուած մեր հզօր և փառաւորեալ»։ «Ցիշեա՛ Տէր զպաշտօնեայս Քո, զձնողսն մեր»։ «Խաչ Քո երկիցի մեզ ապաւէն»։

Համառօտ պատմութիւնք նորոյ Կտակարանի, որք բացատրեն զխորհուրդս տօնից Ծննդեան, Յարութեան, Ընծայման ի տաճարն, Յարութեան, Համբարձման, Հոգեգալստեան, Աւետման Աստուածածնայ։ Յանօթութիւն զտնից Խաչվերացի և Գիւտից խաչին։

Գ. ՏԱՐԻ.

«Քեզ երկիրպագանելով, Տէր Աստուած մեր»։ «Հայր գթած զարմանալի»։ «Հրեշտակի հաղագութեան յանձն արա զանձինս մեր»։ «Ընկալ Տէր զաղաչանս մեր»։ «Փառք ի բարձունս Աստուծոյ»։ Հանդիսանակն Հաւատոյ։

Ճարտարագիտութիւն բացատրութեան եկեղեցական նշանաւոր տօնից. որպի-

պիսիք են՝ Վարդավառին Լուսաւորչին, Թադէոսի և Բարդուղիմէոսի առաքելոցն, սրբոց Թարգմանչացն, Մեծին Ներսիսի սրբոց Վարդանանցն և Առաքմանց Հռիփսիմեանցն, Էջմիածնի, Երևմանն խաչին, Վարագայ Խաչին, և այլոցն։

Խորհուրդք մասանց շինուածոյ եկեղեցւոյ և բացատրութիւն գլխաւոր քարոզաց և աղօթից Ս. Պատարագի։

Բ. Դասեր։

Դ. ՏԱՐԻ.

Սրբազան պատմութիւն Հնոյ Կտակարանի։

Քրիստոնէական Վարդապետութիւն։—Մեկնութիւն Ցերեկային աղօթից, մեկնութիւն Հանգանակին Հաւատոյ և բացատրութիւն եօթն Խորհրդոց եկեղեցւոյ՝ ըստ դաւանութեան Հայաստանեայց եկեղեցւոյ։

Ե. ՏԱՐԻ.

Սրբազան պատմութիւն Նորոյ Կտակարանի։ Շարունակութիւն Քրիստոնէական Վարդապետութեան։—Մեկնութիւն Ցասնաբանեայ պատգամաց, յորս բացատրին յարաբերութիւնք մարդոյ ընդ Աստուծոյ և ընդ ընկերին։ Կարգ Աստուածպաշտութեան՝ ըստ կանոնաց եկեղեցւոյ Հայոց։

Հրահանգ և Ծրագիր ուսման Հայ լեզուի ի վանս Անկիղեցական—Միաբան-վիդասեան և երկսեռեան ուսումնարանաց Հայոց։

Սկիզբն ուսման մայրենի լեզուի յառաջնում ամի լինի բնրանացի վարժութեամբ, որոց նպատակ է նախապատրաստել զնորեկ մանկունս ի համակարգեալ ուսումն գրագիտութեան։ Վարժութիւնք այդոքիկ լինին դիւրընդել զրուցատրութեամբք ուսուցչին ընդ մանկունս։ Նիւթք զրուցատրութեանցն կարին լինել այլ և այլ առարկայք զննելիք առաջք մանրավէպք, առածք և նմանք սոցին որք ամենայնիւ դիւրահասք լիցին մանկանց՝ ըստ լեզուին և ըստ բովանդակութեան։ Փոյթ լիցի ուսուցչին, զի ի վարժութիւնս աշակերտ ոք յորժամ խօսիցի կամ պատմիցէ և կամ նկարագրիցէ զառարկայ ինչ՝ արտասանութիւն նորա լիցի պարզ և լիահնչիւն, ձեւ արտայայտութեանն՝ կանոնաւոր, իմաստքն մակինք և գիտակցականք և նկարագրութիւն զննելի առարկային կատարեալ՝ ըստ չափու կարողութեանն։ Ի նպատակ նախակրթանացն այսոքիկ յոյժ կարևորք վասն արգիւնաւէտ ընթացից ուսուցման լեզուի կարին տևել ի սկզբան անդ տարւոյն եօթնեակս երկուս կամ երիս։

Ցետ այսորիկ ուսուցիչն մտիցէ յուսուցումն գրագիտութեան հնչական եղանակաւ, ծանօթս տալով մանկանց նախ զհնչմունսն մարդկային խօսից հատուածով իրիք ի նիւթոց անտի անցեալ զրուցատրութեանց, ապա վերածեցէ զհատուածն զայն ի նախադասութիւնս, և զնախադասութիւնսն վերլուծեսցէ ի բառս զորս ապա ի վանկս և զայսոսիկ ի տառս։ Յորժամ աշակերտք այսու բնական և դիւրիմանալի եղանակաւ գիտասցեն զնշանակութիւն տառիցն ի խօսս և զկերտութիւն նոցին, ապա պարտ է անդրադարձաբար քաղաքավարութեամբ զուգապատշաճ տառից կազմել զվանկս, զբառս և զնախադասութիւնս, ձևակերպելով միանգամայն ի գիր զամենայն, զոր

ուսցին մանկունք։ Ցոյժ օգտակար լիցի եթէ աշակերտք, յորչափ ինչ հնար իցէ ինքնին կատարեսցեն զվերտողեալ կրթութիւնսն, իսկ ուսուցիչն առաջնորդեսցէ միայն նոցա, և ի տկարանալ և եթ նոցին՝ ցուցցէ զդիւրին և զկարգաւոր եղանակն։

Զկնի նախապատրաստութեանցս պարտ է տալ ապա ի ձեռս աշակերտաց զյարմարաւոր դասագիրս ընթերցանութեան։

Ի ժամ ընթերցանութեան հարկ անհրաժեշտ է ուսուցչին ուշադիր լինել, զի աշակերտք ընթերցցին մտաւութեամբ, ճշգրիտ և պարզ առոգանութեամբ և անսայթաք վերծանութեամբ։ Առ այս կարևոր է, զի ուսուցիչն ինքնին յառաջագոյն միանգամ և երկիցս ընթերցցի զդասն ի լուր աշակերտաց, ապա տացէ նոցա կրկնել զնոյն ի ներկայութեան իւրում, ուղղելով զթերութիւնսն և հուսկ յետոյ տացէ զայն դաս ի սերտումն ըստ առանձինս կարգին։ Ընդ սմին փոյթ կալցի ուսուցիչն՝ տալ յընթերցումն աշակերտաց միշտ գրուածս դիւրահաս և համապատասխանս չափու զարգացման նոցա՝ ըստ լեզուին և ըստ իմաստիցն։ Սոյնպէս միտ պիտի, զի վերծանութիւն աշակերտաց լիցի բնական ձայնիւ և պատշաճաւոր տրոհութեամբք բանից, որպէս խօսին մարդիկ ի հասարակի ընդ միմեանս, քանզի ոչ այլ ինչ է գիրն, եթէ ոչ պատկեր մարդկային խօսից։ Մեծապէս վնասակար է յորժամ ծոյլատրեն մանկանց ընթերնուլ եղանակաւոր իմն կերպիւ, իբրև թէ յեկեղեցւոջ և անտեղի ձայնարկութեամբք։

Եւ զուղագրութենէ լեզուին պարտի հոգ տանել ուսուցիչն։ Ա՛չ եթէ յետաձգել պիտոյ իցէ զկրթութիւն ի կանոնս ուղղագրութեան ցուսումն քերականութեան, յորժամ մանրամասնօրէն և համակարգութեամբ առանգնելի են կանոնքն պնորիկ, այլ անդստին ի սկզբանէ գրավարժութենէն՝ հարկ է կրթել զմանկունս նաև յուղղագրութեան։ Առ այս բազում նպաստ հնչական եղանակ դասաւանդութեան, քանզի անդէն իսկ ի վերլուծելն և ի բաղադրելն ըզառս յորժամ զուտ հնչումն և եթ տեսին լսի՝ առանց աւելորդ ձայնից, լսելիք ուսանելեաց ընտրանան ճշգրիտ արտասանութեան, ապա ուրեմն և ձևակերպութեան մէն մի գրոյ։ Հուսկ ուրեմն ի վարժութիւն ուղղագրական կանոնաց պիտեսցի և յաճախակի արտագրութիւն ընտրեալ և նշանակեալ հատուածոց՝ ճշտիւ և մտագրութեամբ, և ապա գրութիւն ի լրոյ պարզ թելադրութեամբ ուսուցչին և միւս ևս կազմելն խմբից ուղղագրելի բառից։ Ա՛յս ամենայն գործնական վարժութիւնք գիւրաւ տպաւորին ի յիշողութեան մանկանց զկանոնս յուղղագրական կանոնաց, չև ևս միանալ ի տեսութիւնս քերականականս, զորս առ յապայն ունին նոքա ուսանել։ Զամենայն վրիպակս աշակերտին անհրաժեշտ է ուղղել ինամով, զի մի տպաւորեսցին այնոքիկ ի միտս նորա և շփոթեսցեն զնա։ Ցոյժ օգտակար իցէ, յորժամ ուսուցիչն կանխապէս ընտրիցէ և կազմիցէ հատուածս յարմարիս վասն նախորոշեալ ուղղագրական գիտելեաց և հոգ տարեալ կանխաւ, զի մի պարունակեսցէ յինքեան հատուածն այն բազմաթիւ գիրս վրիպելիս, քանզի բազում և յաճախական սխալմունք վշտեն կարեն բերել ոգւոյ աշակերտին պղքումն և զյուսահատութիւն։

Ի խոյս հետևանացս իսկ այսոցունց վերջնոց՝ պարտ է ուսուցչին ի մտի ունել ոչ երբէք ծանրաբեռնել զմանկունս աշխատութեամբք, առաւել քան զկար նոցին և անդր քան զչափ զարգացմանն։ ԵՒ դաս նոր՝ յայն դէպս միայն նշանակեսցի, յորժամ ստուգիւ իւրացուցեալ իցէ աշակերտաց զասունդեալն յառաջնմէ։

Ցետ համառօտագոյն ցուցմանցս զուսուցմանէ մայրենի լեզուիս՝ մնացեալն ամենայն թողեալ լինի հմտութեան և աշխատասիրութեան բանիմաց ուսուցչին։ Կարգն ցուր պիտ գնիւթս և զսահմանս ուսման լեզուիս ըստ ամ և ըստ դասարանաց։

Ա. քառաբան.

Ա. ՏԱՐԻ.

Նախապատրաստութիւն բերանացի վարժութեամբք. Գրութիւն և ընթերցումն բառից նախապատրաստութեանց և կարճատօտ յօդուածոց. Ճիշտ արտասանութիւն և կիրառութիւն երկբառաւտ տառից. Ճանաչումն ձայնաւոր և բաղաձայն տառից. Պարզ առոգանութիւն և կանոնաւոր տրոհումն բառից և նախապատրաստութեան՝ յընթերցուածն. Ճանաչումն նշանաց առոգանութեան և տրոհման. Կիրառութիւն գլխագրոց ի յատուկ անուանս և ի սկիզբն պարբերութեանց. Կիրառութիւն նշանաց առոգանութեան. Փոքրիկ և դիւրին ոտանաւորք բերանացի. Արտագրութիւն բառից և նախապատրաստութեանց.

Բ. ՏԱՐԻ.

Կանոնաւոր ընթերցումն յաշխարհիկ լեզու նշանակեալ յօդուածոց՝ բացատրութեամբ հանգերձ. Համառօտութիւն պարունակութեան յօդուածոցդ՝ բանաւոր և մերթ գրաւոր. Պատասխանագրութիւն առ հակիրճ և պարզ հարցմունս ուսուցչին, տուեալս առ ի վարժել զաշակերտս ի գրաւոր արտայայտութիւն մտաց՝ կանոնաւոր շարադասութեամբ բառից. Մաքուր և ճիշտ ընդօրինակումն ընտրեալ հատուածոց. Որոշումն բառից թէ որք յայնցանէ են անուանք առարկայից, որք են անուանք որպիսութեանց առարկայից և ո՛րք ցուցանեն գործողութիւնս նոցունց. այսինքն է՝ ճանաչել զանուն գոյական տծական և զբայ՝ առանց քերականական անուանակոչութեանց. Որոշումն թուոյ անուանց. Կիրառութիւն – և վ գրոց. Ուղղագրութիւն բառից յանգելոց ի մանիկ—եր, ուդ, այն, չէն, էլ, ուկ, այլ, ըեն, եան, ող, նոց, ող, էտ, ուդ, և այլն. Կազմութիւն պարզ բարդ, ածանցեալ և բաղադրեալ բառից. Որոշումն յատուկ, հաւաքական և հասարակ անուանց. Որոշումն մասանց բանի, տալով նոցա զքերականական անուանս. Որոշումն նախադասութեանց և գլխաւոր մասանց նոցին. Կիրառութիւն նշանաց տրոհման. Կրթութիւնք ի հոլովմունս և ի խոնարհմունս առանց քերականական խիստ հայտնակարգութեան. Բերանացի ոտանաւորք.

Բ. Դասարան

Դ. ՏԱՐԻ.

Ընթերցումն պլ և պլ քաղուածոց ի մատենագրաց և առաւելապէս յեղիշեայ և ի Փարպեցւոյ՝ յաշխարհիկ լեզու. Գրաբառ հատուածք ի Ս. Գրոց և յազգային մատենագրաց և գլխաւորապէս ի յիշատակելոց անտի՝ յերկուց հեղինակացն, համակարգեալ քերականութիւն աշխարհաբառ լեզուի. Անհատակ և կանոնաւոր արտայայտութիւն մտաց՝ գրով և ի բերանոյ՝ աշխարհաբառ լեզուաւ և թարգմանութիւն դիւրին հատուածոց ի գրաբառէ յաշ-

խարհարան, բաղդատելով ի պաշտաձայսոր դէպս պատրերութիւնս երկոցունց՝ ի վերջաւորութիւնս հալովից թուոց, ժամանակայ բայից ևս և ի դասաւորութեան բառից։ Գրաւոր աշխատութիւնք ըստ առաջնումն, այլ մ'յան առաւելագոյն ընդարձակութեամբ և բաղադրութեանն նիւթոցն և բովանդակութեանց Վարժութիւնք ի նամակագրութիւնս և յայլ տեսակս հանապազօրեայ գրագրութեանց։ Ձափաձոյ բանաստեղծութիւնք յաշխարհիկ լեզու և ի գրոցն։

Ե. ՏԱՐԻ։

Ընթերցանութիւն և գրաւոր աշխատութիւն ըստ նախընթացին։ յաւելլով յաւէտ զլսացուցիչ կրթութիւնն՝ առ ի քաջավարժս առնելոյ զմանկունս ի կատարեալ ընթերցանութեան և ի գրութեան։ Փարգմանութիւն դիւրին բանից յաշխարհաբառ ի գրաբառն։ Սուղ գաւառական մանր քերականական գրոց լեզուի և լրացուցմն թերութեանց քերականութեան աշխարհաբառին՝ բաղդատութեամբ օրինաց փոփոխմանն երկոցունցն՝ ըստ չափու հասկացողութեան աշակերտիլոց։ Վերլուծութիւն նախադասութեանց ի գրոց լեզու։ Ընտիր բանաստեղծութիւնք ի բերան։

Պրադիլ ուսման Ռուսաց լեզուի յԵկեղեցական ծխական միապատեան և երկդատեան ուսումնարանս Հայոց։

Ա. ԳՐԱՐԱՆ։

Ա. ՏԱՐԻ։

Ուսումն Ռուս լեզուի սկսանի յերկրորդ կիսամեկէ առաջնոյ տարւոյն, նուիրելով այնմ կէս ժամ յաւուրն։ Կէտ նպատակի դասատուութեան պարտի լինել ծանօթութ առնել զմանկունս խօսուն բարբառոյ Ռուսաց։ քաղելով զնիւթ ուսման ի հասու ածոց տարրական ընթերցարանի Ռուսաց քաջ միտ եդեալ զի հասուածքն այնպիսի բովանդակութեամբ իւրեանց ըստ կարի պատշաճ լցեն նիւթոյն՝ զոր կանխաւ ուսեալ է մանկանց ի մայրենի բարբառ իւրեանց։

Բ. ՏԱՐԻ։

Զկնի բաւականապէս ընտելացուցանելոյ զլսելիս մանկանց յբմբռնումն անսովոր ձայնից և կապակցութեանց նոցին մտիթ է սկիզբն առնել յաջողութեամբ ուսուցանելոյ աշակերտաց զգրագիտութիւն՝ այն է զընթերցանութիւն և զգրութիւն Ռուս լեզուի։ Ինկատ առեալ զի նախ՝ հանապազօրեայ կիսաժամ զբաղմունք յընթացս երկրորդ կիսամեկի առաջնոյ տարւոյն չկարեն հաստատուն ինչ արդիւնս տալ ի կրթութեան խօսուն բարբառոյ Ռուսաց և երկրորդ զի ուսումն երկուց տարբեր լեզուաց ի միում ժամանակի անյարմար իմն է յայնպիսում շրջանի յորում պահանջի ի մանկանց լարել զամենայն մտաւոր զօրութիւնս իւրեանց որպիսի ինչ համարելի է շրջանն յորում զկնի մեքենական ընթերցանութեան մայրենի բարբառոյ ուսելոյ յընթացս առաջնոյ ամի, անցանեն յանսայթաք և յիմաստալից վերծանութիւն, վասն այսորիկ օգտակարագոյն լիցի յառաջնում կիսամեկի չսկսել տակաւին զուսումն Ռուս գրագիտութեան այլ չարունակել զվերջագրեալ բերանացի կրթութիւնս և միայն յերկրորդ կիսամեկէ երկրորդ տարւոյ սկիզբն առնել հիմնաւորապէս ուսուցանելոյ զդրագիտութիւն Ռուս լեզուի։ նշանակելով վասն զբաղմանցս ժամ մի յաւուրն ողջոյն տարւոյ։*

Ցերկրորդ կիսամեկէ սկսանի և տեւէ ցվախճան տարւոյն ուսումն գրագիտութեան՝ այն է ընթերցանութիւն և գրութիւն զնիւթ զբաղմանցս

հիմնելով ի վերայ հատուածոց, որոց աշակերտեալքն հմուացեալ են բանաւոր կրթութեամբք յընթացս երկուց նախորդ կիսամաց։ Միանգամայն պարտ է խորշիլ ի սովորական ընթերցմանէ հնգենայիւք, վասն զի մանկունք քաջ ուրեմն ընտելացեալ են ողջ ածել զսիւզղոլաչս ի մայրենի լեզուի իւրեանց. գարձեալ հարկ ի վերայ է ուսուցչին ի դասատուութեան Ռուս գրութեան օգտիլ ի ծանօթութենէ տարերաց գրոց մայրենի բարբառոյն։

Որ ինչ Հայի յեղանակ դասատուութեան Ռուս լեզուի, ուսուցիչն չը պարտի ընթերցանութեամբ և նմի հատուածոյն չատանալ, այլ փափաքելի է զի ազգի ազգի հրահանգօք կրթեսցէ զմանկունսն և տացէ սեպհականել զամենայն նիւթն, այն է ի բերան ուսանել կանոնաւոր արտաբերութեամբ և իմաստալից ընթերցմամբ, հասու լինել բովանդակ իմաստից ընթերցուածոցն, պատմել զնոյն որչափ հնար իցէ Ռուսերէն, և ընդարձակագոյն ևս Հայերէն՝ յորժամ՝ հարկն պահանջիցէ, գրել անսխալ ղուսեաղն՝ ծանօթանալով կանոնաց ուղիղ գրութեան և գործածութեան կէտից՝ ըստ չափու նիւթոցն ուսելոց։

Գ. ՏԱՐԻ։

Ենթադրելով զի ի վերջ կոյս երկրորդ ամի մանկունք բաւականապէս ուսեալ են զգրագիտութիւն՝ թէև ի վերայ չափաւոր հատուածոց՝ թէ ըստ բովանդակութեանն և թէ՝ ըստ ընդարձակութեան նիւթոյն, ի սկիզբն երրորդ տարւոյ պարտ է զբաղել յուսումն ընդարձակագոյն հատուածոց արձակ և չափածոյ բանից, նովին կարգաւ որպէս ցուցաւ ի վերոյ։ Ի վերջ կոյս տարւոյն ի հատուածոց ընթերցելոց պարտ է հանել կանոնս քերականականս և մանաւանդ ուղղագրականս։ Ցայս վայր աշակերտեալք պարտին գիտել զլեզու Ռուսաց այնչափ՝ որչափ ինչ մատակարարեալ են նոցա հատուածքն ընթերցեալք յընթացս տարւոյն, այլ և հեշտութեամբ ընթերնուլ զյօդուածս դիւրըմբռնելիս, զորս չև ևս իցէ ընթերցեալ նոցա։

Բ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ։

(ՀՈՐՈՒՈՐԴ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ)

Որպէս յաղագս բերանացի պատմութեան, այսպէս և յաղագս գրութեան և ընթերցանութեան պարտ է ի կիր արկանել զնոյն եղանակ դասատուութեան որ ի նախընթաց ամին, ընթերնուլով ընդարձակագոյն հատուածս բանից բանահիւսականս։ Բացատրութիւն գլխաւոր կանոնաց ստուգաբանութեան և համաձայնութեան, մանաւանդ այնոցիկ, որ վերաբերին ուղղագրութեան։ Թարգմանութիւն դիւրին հատուածոց ի հայկականէ ի Ռուս լեզու։ Ընթերցումն մանկական գրոց արտաքոյ դասական պարապմանց ընդառաջնորդութեամբ ուսուցչի։

Տրագիր ուսման ազգային պատմութեան և աշխարհագրութեան Հայաստանի վասն Եկեղեցական-Ժխական երկդասեան Ուսում նարանաց Հայոց։

Ա. Պատմութիւն Ազգային

Բ. Գասագրեան.

Գ. ՏԱՐԻ։

Հայկ.—Արամ.—Արայ գեղերիկ.—Տիգրան Երուանդեան.—Տեղեկութիւնք զվաճառականութենէ Հայոց.—Կրօն նախնի Հայոց (արևապաշտութիւն, պիցապաշտութիւն—Արամազդ, Անահիտ, Վահագն).—Վաղարշակ Ա.—Տիգրան Բ.—Արգար։—Արտաշէս Բ.—Տրդատ և Ս. Գրիգոր Լուսաւորիչ.—Արշակ Բ.—Մեծն Ներսէս.—Սահակ Պարթև և Մեսրովբ Մաշտոց.—Վարդան Մամիկոնեան.—Վահան Մամիկոնեան.—Գայլ Վահան։

Ե. ՏԱՐԻ։

Արշաւանք Արարացւոց (Տիրան Մամիկոնեան).—Աշոտ Բագրատունի.—Աշոտ Բ. Երկաթ.—Աշոտ Գ. Ողորմած.—Անի մայրաքաղաք.—Գագիկ Բ.—Արշաւանք Սելջուկեանց (Ալբ Արսլան).—Թորոս Բ.—Ներսէս Շնորհալի.—Լևոն Բ. Թագաւոր Կիլիկիոյ.—Վաճառականութիւն Հայոց ընդ Եւրոպացիս.—Հեթում Ա.—Արշաւանք Թաթարաց ի Հայս.—Լևոն Գ.—Լևոն Զ.—Լանգթամուր.—Շահ Աբաս.—Նիկոլ Թորոսովիչ.—Փիլիպպոս Աղբակեցի.—Աբգար Եւդոկիացի.—Հայք ի Հնդիկս.—Դաւիթ բէգ.—Մխիթար Սեբաստացի.—Յովսէփ Արդութեան.—Յովակիմ Լազարեան.—Յարութիւն Պէշճեան.—Խաչատուր Աբովեան։

Բ. Աշխարհագրութիւն Հայաստանի։

Բ. Գասագրեան։

Գ. ԼԻ Ե. ՏԱՐԻ։

Դասատուութիւն աշխարհագրութեան պարտի ընթանալ կից ընդ դասատուութեան ազգային պատմութեան. Զկնի տալոյ մանկանց զընդհանուր տեղեկութիւնս վասն աշխարհին Հայոց, զգլխաւոր լերանց, ղեաց և գետոց ևս և զարդի բաժանմանէ երկրին, ուսուցիչն պարտի ի պատմել դքաղաքական անցս՝ ցուցանել ի քարտիզի զտեղիս ուր անցքն դիպեցան. Միանգամայն ի կարևոր կէտս փոյթ ունիցի հաղորդել աշակերտաց տեղեկութիւնս պիտանիս զարդի վիճակէ բնակչաց այլ և այլ գաւառաց և քաղաքաց։

Տրագիր ուսման Պատմութեան և աշխարհագրութեան Ուսուցչ երիկասեան եկեղեցական ուսումնարանաց Հայոց։

Ա. Պատմութիւն Ուսուցչ

(Երէցուէ գասագրէ)

Նախնի Սլաւոնք, կենցաղավարութիւն և հաւատալիք նոցա։ Հրաւէր Վարեկաց։ Դարձ Օլգայի ի քրիստոնէութիւն։ Մկրտութիւն Վլադիմիրի և Ռուս ազգի։ Բաժանումն և տկարանալ Ռուսաց դնդի մահուան Յարոսլաւի։ Արշաւանք Թաթարաց։ Ազէքսանդր Նեւսցի։ Ճակատամարտ որ ի Կու-

լիկով։ Միացումն Ռուս երկրի ընդ ձեռամբ Յովհաննու Գ-ի, Նուաճումն Վլադանի, Աստրախանի և Սիբերիայ։ Սարկումիւն գիւղացւոց։ Ինքնակոչք։ Հաստատուիւն ի գահն Ռուսաց Ռոմանեան տոհմի։ Գլխաւոր գէպք ինոր պատմուիենէ Ռուսաց ցներկայ աւուրս։

Բ. Աշխարհագրուիւն Ռուսաստանի

(չերէզոդ դասագրէ)։

Ծանօթուիւն երկրին Ռուսաց ի վերայ քարտիզի, սահմանք, ծովք, լիճք, գետք։ Ընդհանուր ձև մակերևուիւն երկրին, լերինք։ Բաժանումն Ռուսաստանի յԵւրոպական և յԱսիական մասունս, ևս և ինահանգս և ի գաւառս (առանց անուանելոյ զայնս)։ Կովկաս։ Մայրաքաղաք Ռուսիոյ և նշանաւոր քաղաք նորին։ Երկաթուղիք Ռուսաց։ Տարածուիւն Ռուսիոյ, թիւ բնակչաց և ցեղք նոցին։

Օրինակ թ. 8

ՎԿԱՅԱԳԻՐ

Աշակերտ Եկեղեցական - Ծխական միդասեան Ուսումնարանի տղայոյ (այս անուն տպագրէ կամ գեղգ) (ասպ նշանակելի են անուն, հայրանուն և մականուն, վճռակ կամ կալուած, գեղգ ծննդեան, տարի ամիս և օր ծննդեանն), եմուտ յՈւսումնարան յամի 18 յ բաժանումն և ի վերջին հարցաքննուիեան ամենայն առարկայից՝ յամենեան 18 ամի, եղոյց՝ վարուք յառաջադիմուիւն այսպիսի։

1. ի կրօնագիտուիեան
2. ի Հայոց լեզուի
3. ի Ռուսաց լեզուի
4. ի թուաբանուիեան
5. ի վայելչագրուիեան
6. ի գծագրուիեան
7. ՅԵրգեցողուիեան

Որոյ վասն և տուաւ նմա վկայագիրս սոյս կնքով Ուսումնարանիս յամի 18 յամենեանն ի (այս անուն տպագրէ կամ գեղգ)։

Սպասպգրա-ընկ-ն Հոգեբաշյո-աց և Տեսչի կամ ա-ատգ ո-ան-գչի

Տ. կ.

Օրինակ Թ. 8

ՎԿԱՅԱԳԻՐ

Աշակերտ Եկեղեցական-Ծխական երկդասեան Ուսումնարանի տղայոց (այս անուն տպագրի կամ գեղջ) (ասպ նշանակելի են անուն, հայրանուն և մականուն, վիճակ կամ կոչումն, բնակ ձննդեան, տարի, ամիս և օր ձննդեան), համառօտ յՈւսումնարան յամի 18 յ բաժանումն դասարանի և ի վերջին հարցաքննութիւնս ամենայն առարկայից յամենեանն

18 ամի, եղայց՝ վարուք յառաջադիմութիւն այսպիսի.

1. ի կրօնագիտութեան
2. ի Հայոց լեզուի
3. ի Ռուսաց լեզուի
4. ի թուաբանութեան
5. ի պատմութեան Հայոց և յաշխարհագրութեան Հայաստանի
6. ի պատմութեան Ռուսաց և յաշխարհագրութեան Ռուսաստանի
7. ի բնական պատմութեան
8. Ցընդհանուր աշխարհագրութեան
9. Ցերգեցողութեան
10. ի վայելչագրութեան
11. ի գծագրութեան

Որոյ վասն և տուաւ նմա վկայագիրս այս կնքով Ուսումնարանիս յամի 18 յամենեանն ի (այս անուն տպագրի կամ գեղջ):

Պատրաստող-ին Հոգեբաշխ-ացս և Տնուի կամ աստղ անուն-ցն:

Տ. կ.

Օրինակ թ. 8

ՎԿԱՅԱԳԻՐ

Աշակերտուհի եկեղեցական-Ծխական միդասեան Ուսումնարանի Օրիորդաց (այս անուն տպագրէլ կամ գեղջ) (ապա նշանակելէ են անուն, հայրանուն և մականուն, վճռակ կամ կալոծ, պէտք ձննդեան, տարի, ամիս և օր ձննդեան), ամայց, եմուտ յՈւսումնարան յամի 18 յ բաժանումն և ի վերջին հարցաքննութիւնս ամենայն առարկայից յամենեանն 18 ամի, եղոյց՝

վարուք յառաջադիմութիւն այսպիսի,

1. ի կրօնագիտութեան
2. ի Հայոց լեզուի
3. ի Ռուսաց լեզուի
4. ի թուաբանութեան
5. ի վայելչագրութեան
6. ի գծագրութեան
7. ի ձեռագործի
8. ի ցերգեցողութեան

Որոյ վասն և տուաւ նմա վկայագիրս այս կնքով Ուսումնարանիս յամի 18 յամենեանն ի (այս անուն տպագրէլ կամ գեղջ):

Տպագրեալ ի Հոգաբարձուէ և Տեսչէ կամ առաջնորդէ:

Տ. կ.

Օրինակ թ. 8.

ՎԿԱՅԱԳԻՐ

Աշակերտուհի Եկեղեցական-Ծխական երկդասեան Ուսումնարանի Օրիորդաց (այս անուն փակէտ կամ գեղջ) (ապա նշանակելէ են անուն, հայրանուն և մականուն, վճռակ կամ կոչում, թէղի ծննդեան, պաշէ, ամիս և օր ծննդեան), ամայ, եմուտ յՈւսումնարան յամի 18 յ բաժանումն դասարանի և ի վերջին հարցաքննութիւնս ամենայն տարակայից յամենեանն 18 ամի, եղոյց՝ վարուք յառաջադիմութիւն այսպիսի.

1. ի կրօնագիտութեան
2. ի Հայոց լեզուի
3. ի Ռուսաց լեզուի
4. ի թուաբանութեան
5. ի պատմութեան Հայոց և յաշխարհագրութեան Հայաստանի
6. ի պատմութեան Ռուսաց և յաշխարհագրութեան Ռուսաստանի
7. ՅընդՀանուր պատմութեան
8. ՅընդՀանուր աշխարհագրութեան
9. ի բնական պատմութեան
10. ի վայելչագրութեան
11. ՅերգեցողութեանԻ
12. ի գծագրութեան
13. ի ձեռագործի

Որոյ վասն և տուաւ նմա, վկայագիրս այս կնքով Ուսումնարանիս յամի 18 յամսեանն

յամի (այս անուն փակէտ կամ գեղջ):

Սպասպգրո-ին Հոգաբարձուաց և Տեսչի կամ տեսչուհոյ:

Տ. կ.

Աւուրք եկեղեցական և կայսերական տօնից, յորս պարտին աշակերտուհիք և աշակերտք դպրոցայ Հայոց տղաոց լինել ի պարապմանց դասուց և յաճախել յեկեղեցիս։

ՏՕՆՔ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ.

Ա, 5, 6, 7, և 13 Յունվարի տօնք Ծննդեան, Յայտնութեան և Անուանակոչութեան Տեառն Յիսուսի Քրիստոսի։
Բ. Փետրվարի 14 տօն Քառասնօրեայ Գալստեան Տեառն ի Տաճարն։
Գ. Տօն Սրբոց Վարգանանց զօրավարացն Հայոց։
Դ. Ապրիլի 7, տօն Աւետեաց Ս. Աստուածածնի։
Ե. Տօն մտին ի վիրապն Ս. Գրիգորի Լուսաւորչին։
Զ. Տօն ելիցն ի վիրապէ Ս. Գրիգորի Լուսաւորչի։
Է. Տօն գիւտի նշխարաց Ս. Գրիգորի Լուսաւորչի։
Ը. Տօն սրբոց Թարգմանչացն Սահակայ և Մեսրոբայ Հայրապետացն։
Թ. Տօն սրբոյ Առաքելոյն Թադէոսի և սրբուհւոյ Սանդխտոյ կուսին։
Ժ. Տօն սրբոց նախկին լուսաւորչացն Հայաստանի սրբազան առաքելոցն Թադէոսի և Բարդուղիմէոսի։
ԺԱ. Սեպտ. 8, տօն Ծննդեան Ս. Աստուածածնի ի յԱննայէ։
ԺԲ. Նոյեմբ. 21. տօն ընծայման Ս. Աստուածածնի ի տաճարն։
ԺԳ. Տօն Յղութեան Ս. Աստուածածնի ի յԱննայէ։
ԺԴ. Տօն անուանակոչութեան Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց Տ. Տ. Մակարայ, որ կատարի ի տօնի Սրբոց Հարցն եգիպտացւոց Պօղայ Մակարայ ևլն։
ԺԵ. Նոյեմբ. 10. Տօն տարեդարձի օծման Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց Տ. Տ. Մակարայ։

ՏՕՆՔ ԿԱՅՍԵՐԱԿԱՆՔ.

Ա. Փետրվարի 26 Ծնունդ Ն. Կ. Մ. Աղէքսանդր Աղէքսանդրովչի։
Բ. Մարտի 2 գահակալութիւն Ն. Կ. Մ. Աղէքսանդր Աղէքսանդրովչի։
Գ. Մայիսի 6 Ծնունդ Ն. Կ. Բ. Ժառանգի Կայսեր Նիկոլայ Աղէքսանդրովչի։
Դ. Մայիս 15 Թագադրութիւն Նորին Կ. Մեծութեանց Օգոստ. Կայսեր Աղէքսանդր Գ. Աղէքսանդրովչի և կայսերուհւոյ Մարիայ Ֆեօդորովնայի։
Ե. Յուլիս 22 Անուանակոչութիւն Կայսրուհւոյ Մարիայ Ֆեօդորովնայի։
Զ. Օգոստ 30. Անուանակոչութիւն Օգոստափառ Կայսեր Աղէքսանդր Աղէքսանդրովչի։
Է. Նոյեմբ. 14 Ծնունդ Կայսրուհւոյ Մարիայ Ֆեօդորովնայի։
Ը. Դեկտ. 6. Անուանակոչութիւն Ն. Կ. Բ. Ժառանգի Կայսեր Նիկոլայ Աղէքսանդրովչի։

ՆՅԼԵՒ ՆՅԼՔ.

Վեհափառ Հայրապետն ազգիս ամսոյս 5-ին առաւօտեան ժամը 6-ին մեկնեցաւ աստի գնալ ի Հայրապետական ամարանոցն ի Իւրական յապատհովութիւն։

—

Աղէքսանդրօպօլու Հոգեւոր Կառավարութիւնը ամսոյս 11-ին յայտարարութեամբ ներկայացրել է Սինօդին ի յիշատակ հոգւոյ Հանգուցեալ ազնուական Խաչատուր Ասլանեանցի 50 րուբլի։

Աղօթումենք առ Աստուած Հանգուցելոյ հոգին լուսաւորել ընդ սուրբս և ընդ սիրելիս գասաւորելով յարքայութեան իւրում, և մխիթարել վշտացեալց սիրտը նոր անհուն ողորմութեամբ։

—

Շնորհակալութեամբ ստացանք Պ. Կոստանդին Մելիք Շահնազարեանցի

Ա. Ուղեցոյց Գինեգործութեան. Գինն է 60 կոպեկ։

Բ. Բուսաբանական Աշխարհից Անմշակ և Մշակուած ծառի կեանքը. Գինն է 30 կոպեկ։

ԿԱՆԵՐԻՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄՆ։

Մայր Աթոռոյս Ձեմարանի վարչութիւնը ծանուցանումէ իգիտութիւն հասարակաց իւր Հետևեալ տնօրէնութիւնները։

Ա. Այս տարի Ձեմարանում աշակերտաց սահմանեալ թիւը լրացած լինելով նոր աշակերտաց ընդունելութիւն չի լինել բնաւ։

Բ. Ձեմարանը այսուհետև երթևեկ աշակերտ ունենալու չէ բնաւ։

Գ. Արձակուրդի պատճառով հայրենիք գնացած այն աշակերտները, որոնց տուաջնորդներն, կոնսիստորեաններն, վոխանորդներն, հոգևոր կառավարութեանց և գործակալների միջոցաւ յայտնուած է իրանց Ձեմարանի աշակերտութենից արձակուած լինելը, չը պէտք է վերադառնան Ձեմարան։

Դ. Այսուհետև ընդունելիք աշակերտները եթէ արտասահմանից են կամ Թուրքաստանից 75 րուբլի, իսկ եթէ Կովկասեցի՝ 50 րուբլի պէտք է կոնիսիաճար դրամ գնեն Մայր Աթոռոյս գանձարանը, որպէս զի այդ դրամից հանուի նոցա հասուցած արտակարգ ծախսը թէ հանդերձեղինաց և թէ այլ առարկայից վերաբերութեամբ, և այդ դրամով հոգացուի նոցա վերադարձն ի հայրենիս։

ԻՏՊԱՐԱՆԻ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ.